ՅՈԶՂԱՏԻ ԵՎ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ «ԱԼԵՄԴԱՐ» ՕՐԱԹԵՐԹԻ

ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆ

Հանրահայտ փաստ է, որ իթթիհատականների՝ հայերի բնաջնջման քաղաքականությունը թուրքերի կողմից պաշտոնապես դատապարտվել է դեռևս 1919-1920 թվականներին թուրքական ռազմական արտակարգ ատյանների միջոցով:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին հաջորդած ամիսներին պարտված Օսմանյան կայսրության սուլթանը և անընդմեջ փոփոխվող սադրազամները, միջազգային հանրության ճնշման ներքո, որոշեցին դատական պատասխանատվության ենթարկել պատերազմի տարիներին կատարված հանցագործությունների (մասնավորապես՝ հայերի տեղահանության և կոտորածների) հեղինակներին:

1919-1920 թվականների ընթացքում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով տեղի ունեցան մոտավորապես 36 տարբեր դատական պրոցեսներ, որոնցից գլխավոր են համարվում «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների, «Հատուկ կազմակերպության» ղեկավարների, կառավարության անդամների և կուսակցության պատասխանատու քարտուղարների դատավարությունները:[1] Օսմանյան կայսրության տարբեր շրջաններից հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով կատարվեցին նաև առանձին անհատների դատավարություններ:[2] Դրանց մասին տեղեկություններ հրապարակեցին տվյալ ժամանակաշրջանում Ստամբուլում հրատարակվող ինչպես թուրքալեզու, այնպես էլ հայալեզու, ֆրանսալեզու և հունալեզու մամուլներում:[3] Դատավարությունները ներկայացրած օրաթերթերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Թաքվիմ-ի վաքայի» («Իրադարձությունների օրացույց») պետական պաշտոնաթերթը, որում տպագրվել են գլխավոր դատավարությունների ամբողջական արձանագրությունները: Պետք է նշել, որ ժամանակաշրջանի մամուլը որոշակի դերակատարում է ունեցել նաև մի քանի հանցագործների բացահայտման խնդրում:

Դատավարություններին առավել ակտիվորեն արձագանքող օրաթերթերից է եղել նաև 1912-1921 թվականներին Ստամբուլում հրատարակվող «Ալեմդար» («Դրոշակակիր») օրաթերթը, որի տնօրենն էր Ահմեդ Քաղրին, իսկ պատասխանատու խմբագիրը՝ Ռեֆի Ջևադ Ուլունայը:[4] «Ալեմ-

դարը» հրատարակվել է նաև «Թաքվիմի գազեթե» («Օրացույց-օրաթերթ»), ինչպես նաև՝ «Թեշրիհ» («Մեկնաբանում») անուններով:[5] Օրաթերթի 1918-1921թթ. համարները պահպանվում են Թուրքիայի Ազգային մեծ ժողովի գրադարանում:[6] «Ալեմդարի» համարներում տեղ են գտել ինչպես դատավարությունների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություններ, այնպես էլ վերլուծական բնույթի հրապարակումներ: «Ալեմդարը» մանրամասնորեն ներկայացրել է նաև Յոզղատ գավառի և Տրապիզոն նահանգի հայերի կոտորածների պատասխանատուների դատավարությունները:

Յոզղատ գավառի դատավարությունն առաջինն էր հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի շարքում: Դատավարությունը (18 նիստ) տեղի է ունեցել 1919թ. փետրվարի 5-ից մինչև ապրիլի 7-ը: Մեղադրյալները սկզբնապես 3 հոգի են եղել՝ Յոզղատի մութասարրիֆի տեղակալ, Բոզաղլյանի կայմակամ Մեհմեդ Քեմալը, Յոզղատի ժանդարմերիայի պետ, մայոր Մեհմեդ Թեվֆիկը և պետական պաշտոնյա Ֆիազ Ալին: 17-րդ նիստում վերջինիս գործն առանձնացվել է՝ հետագայում քննվելու նպարակով, բայց այդպես էլ այն չի քննարկվել: Ամբաստանյալների շահերն էին ներկայացնում 6 դատապաշտպաններ:[7]

Դատավճիռն ընդունվել է ապրիլի 8-ին, համաձայն որի ամբաստանյալներից Բոզաղլյանի կայմակամ Քեմալ բեյը դատապարտվել է մահվան, իսկ ժանդարմերիայի պետ Թեվֆիկը՝ 15 տարվա տաժանակիր աքսորի:[8]

Տրապիզոնի դատական գործը (20 նիստ) տեղի է ունեցել 1919թ. մարտի 26-ից մինչև մայիսի 20-ը: Դատավճիռը կայացել է մայիսի 22-ին: Ամբաստանյալներն էին հարկային տեսուչ, «Կարմիր մահիկ» հիվանդանոցի հոգաբարձու Մեհմեդ Ալին, ոստիկանապետ Նուրին, գործակալ Մուստաֆան, կայմակամ Թալաաթը, հյուրանոցատեր Նիազին, առողջապահության տեսուչ Ալի Սաիբը, ինչպես նաև «Հատուկ կազմակերպության» տրապիզոնյան մասնաճյուղի ղեկավար, հետագայում նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Յուսուֆ Ըզգան: Ամբաստանյալների շահերն էին ներկայացնում 6 դատապաշտպան: Տրապիզոնի դատավարության 16-րդ նիստում Յուսուֆ Ըզգայի գործն առանձնացվել է և հետագայում քննվել «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատական պրոցեսում: Տրապիզոնի դատավարության ընթացքում հեռակա կարգով քննվում էին նաև Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի և կուսակցության պատասխանատու քարտուղար Նայիլ բեյի գործերը:[9] Ընդունված դատավճռով Ջեմալ Ազմին և Նայիլը հեռակա կարգով դատապարտվել են մահվան, Մեհմեդ Ալին՝ 10, իսկ Մուստաֆա էֆենդին և Նուրի բեյը՝ 1 տարվա բանտարկության:[10] Դատարանի կազմը, Նիազի էֆենդու և Թալաաթ բեյի մեղավորությունը հաստատող փաստերը շրջանցելով, արդարացրել է նրանց, իսկ առողջապահության տեսուչ Ալի Սաիբ բեյի դատաքննությունը, իբրև թե «որոշակի հանցանշան չլինելու պատճառով», կարճվել է:[11] Հետագայում նրա դեմ առանձին դատաքննություն է կատարվել՝ Տրապիզոնի «Կարմիր մահիկ» հիվանդանոցում գազի և այլ միջոցներով հայերի թունավորման մեղադրանքով:[12]

Ինչպես հայտնի է, թուրքական պաշտոնական պատմագրությունը, անտեսելով Հայոց ցեղասպանությունը հաստատող բազմալեզու և բազմաբնույթ գրականությունը՝ տարբեր երկրների արխիվներից քաղված փաստաթղթերը, ականատեսների վկայություններն ու հուշերը, ինչպես նաև՝

թուրքական ռազմական արտակարգ ատյանների կողմից ընդունված դատավճռները, որոնք ակնհայտորեն բացահայտում են տեղահանության բուն նպատակը՝ հայերի բնաջնջումը, շարունակում է ժխտել Եղեռնի փաստը: Թուրքական պատմագրության պաշտոնական վարկածի համաձայն՝ 1915-1916 թվականներին կատարվածը ոչ թե ցեղասպանություն էր, այլ ընդամենը տեղահանություն: Ըստ թուրք պատմաբանների, կոտորածները տեղահանության ընթացքում տեղական պաշտոնյաների կողմից ցուցաբերված անփութության և պաշտոնի չարաշահման արդյունք են եղել: Թեև վերոհիշյալ վարկածը բազմիցս հերքվել է ոչ միայն հայ, այլ նաև այլազգի բազմաթիվ պատմաբանների կողմից բերված փաստերով, թուրք պատմաբանները համառորեն չեն հրաժարվում իրենց տեսակետից:

Յոզղատի և Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում լսված վկայությունները, ցուցմունքները, ինչպես նաև հետաքննության ընթացքում ձեռք բերված պաշտոնական փաստաթղթերը կրկին հաստատում են, որ կոտորածները ոչ թե եղել են տեղական պաշտոնյաների չարաշահման արդյունք, այլ կազմակերպվել են կառավարության կողմից:

Նախ նշենք, որ թե՛ Յոզղատի, թե՛ Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում հանդես եկած վկաները հիմնականում եղել են թուրքեր և այլ ազգությունների մահմեդականներ[13]: Բացի այդ, Տրապիզոնի դատավարության ընթացքում վկայություններ են տվել բարձրաստիճան այնպիսի պաշտոնյաներ, ինչպիսիք են Վանի նախկին նահանգապետ Նազըմը, Էրզրումի նախկին նահանգապետ Թահսինը, ռազմածովային նախարար Ավնին, իրավական տեսուչ Քենանը, Տրապիզոնի և Լազըստանի զորքերի շտաբի պետ, գնդապետ Մուհթարը, լեյտենանտ Ահմեդը և ուրիշներ:[14]

Յոզղատի դատավարության ընթացքում բացահայտվում է, որ հայերի քարավանները հսկելու նպատակով ուղարկված պաշտոնյաները տեղի բնակչությանը հրահրել են հայերի դեմ: Այսպես, մարտի 25-ի նիստում դատախազ Հարալամբու Էֆենդին ամբաստանյալ Քեմալ բեյին հարցնում է, թե հայերի քարավանները հսկելու և կարգուկանոնը պահպանելու նպատակով ուղարկված Աբդուլլահը ինչու է խառնակչություններ հրահրել բնակչության մեջ: Դատախազը եզրակացնում է, որ պետական պաշտոնյաների առկայության պայմաններում պետության կողմից նման անձանց ուղարկելը հատուկ նպատակ էր հետապնդում.

«Դատախազ-Աբդուլլահ անվամբ մեկին ճանաչու՞մ եք:

Քեմալ բեյ-Չերքակալվածներից է, չէ՞, ճանաչում եմ:

Դատախազ-Քարավանը հսկողներից է եղել:

Քեմալ բեյ-Այո՛:

Դատախազ-Նա ինչու՞ է բնակչության մեջ խառնակչություններ հրահրել, եթե կառավարությունը նրան էր վստահել կարգուկանոնը պահպանելու խնդիրը:

Քեմալ բեյ-Անտեղի երևույթ ի հայտ չգալու համար:

Դատախազ-Պետական պաշտոնյաների առկայության պայմաններում նրանց ևս ուղարկելը հատուկ նպատակ (maksad-i mahsus) էր հետապնդում»:[15]

Նույն նիստում նախագահի կողմից հիշատակվում է Յոզղատի հոգևոր առաջնորդի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքը, համաձայն որի մյուֆթին փորձել է խրատել Քեմալին, իսկ վերջինս ասել է. «Դու կառավարությունից բարեգու՞թ ես (Sen hükümetten merhametli

misin?)»:[16]

Բողազլյանի կայմակամ Քեմալ բեյի՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքի համաձայն, ինքը ստորադասներին հրամայել էր տեղահանությանը վերաբերող հրամանների մի մասը կարդալուց հետո այրել: Այդ մասին Քեմալին հիշեցվեց նաև մարտի 25-ի նիստում: Թեև Քեմալ բեյը փորձեց հերքել իր իսկ ցուցմունքը, սակայն դատախազ Հարալամբու էֆենդին հաստատեց այն.

«Նախագահ - Նախաքննության ընթացքում Ձեր կողմից տրված ցուցմունքների համաձայն՝ տեղահանությանը վերաբերող փաստաթղթերի մի մասը կարդալուց հետո այրելու հրաման եք տվել, իսկ մնացածը որտե՞ղ է:

Քեմալ բեյ - Բոլորն էլ պահպանվել են, էֆենդի՛: Ճիշտն ասած, այդ օրը շատ հոգնած էի, (ճանապարհին) ուրբուն հոգով մի վագոնում էինք: Եվ քանի որ քունս տանում էր, չգիտեմ՝ ինչպես եմ ցուցմունքներ տվել:

Դատախազ - Ես, հետաքննչական հանձնաժողովի անդամ հանդիսանալով, հայտնում եմ, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը, 3-4 ժամ մտածելուց հետո է գրել»:[17]

Դատաքննության ընթացքում ամբաստանյալները փորձում էին իրենց արդարացնել՝ վկայակոչելով կառավարության կողմից ստացված հրամանները: Դատալսումների ընթացքում նրանց կողմից տրված ցուցմունքների համաձայն՝ կառավարությունը գոյության միջոցներ չէր տրամադրել հայերի քարավաններին.

« - Նախագահ - Քեմալ բեյը հայտնեց, որ տեղահանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու խնդրով զբաղվում էր ժանդարմերիայի հրամանատարը:

Թևֆիկ բեյ (ժանդարմերիայի նախկին պետ) - Ինչպե՞ս: Եթե կառավարությունը միջոցներ չէր տրամադրում, ես ի՞նչ կարող էի անել, իմ գրպանի՞ց միջոցներ հատկացնեի, դրա մասին կառավարությունը պետք է հոգար:

Նախագահ - Դուք պետական պաշտոնյա՞ եք:

Թևֆիկ բեյ - Իհարկե պետական պաշտոնյա եմ:

Նախագահ - Տեղյակ չէի՞ք, որ բնակչության շարքերում չունևորներ կային:

Թևֆիկ բեյ - Ի՞նչ իմանայի, էֆենդի՛: Մարդկային պարտքս կատարելով ստիպված էի նրանց կերակրել, այդպես էլ վարվեցի:

Նախագահ - Եթե, մարդկային պարտքը կատարելու փոխարեն, Ձեր պաշտոնական պարտականությունները կատարեիք, ավելի ճիշտ չէ՞ր լինի:

Թևֆիկ բեյ-Մտքովս չանցավ դրամ պահանջել»:[18]

Յոզղատի դատավարության մարտի 27-ի նիստի ժամանակ նույն փաստարկով է իրեն փորձում արդարացնել ամբաստանյալներից Քեմալ բեյը.

«Նախագահ – Ճիշտն ասա, հայերին բնաջնջելու մտադրությունները (itlâf ettirmek âgraz) անձնակա՞ն, թե՞ մեկ այլ դրդապատճառ ունեին:

Քեմալ բեյ - Քա՛վ լիցի, փաշա՛, հայերին բնաջնջելու հրաման երբեք չեմ տվել:

Նախագահ - Մի՞թե Յոզղատը գործողությունների թատերաբեմից դուրս էր:

Քեմալ բեյ - Ո՛չ, էֆենդի՛:

Նախագահ - Ինչու՞ մի խումբ փախստականներ բռնագաղթեցվեցին առանց փոխադրամիջոցների, ծայրաստիճան չքավորության պայմաններում:

Քեմալ բեյ - Միջոցներ չկային, էֆենդի՛, ես կատարել եմ կառավարության կողմից ստացված հրամանը».[19]

Յոզղատի դատավարության մարտի 27-ի դատալսման ժամանակ հայերի կոտորածները հաստատող վկայություններ է տալիս գնդապետ Մեհմեդ բեյը՝ մասնավորապես նշելով, որ ինքն անձամբ տեսել է, թե ինչպես են հայերին կոտորում կացիններով և դաշույններով (balta ve biçak ile Ermenilerin kesildigini bizzat gördügünü beyan etti):[20]

Նույն նիստում վկաներից Սկյուտարի մութասարրիֆ Մեհմեդ Ալի բեյը չի բացառում կոտորածներին պաշտոնյաների և տեղի բնակչության մասնակցության հավանականությունը, սակայն, ըստ վկայի ցուցմունքի, այն հնարավոր էր կառավարության կողմից տրված գաղտնի հրամանի (hükümetin bir emr-i hafisi) դեպքում միայն:[21]

Տրապիզոնի դատական նիստերի ընթացքում լսված վկաների ցուցմունքների շնորհիվ լիովին հաստատվեց, որ այստեղ տեղի ունեցած ջարդերը, թունավորումները, ջրախեղդ անելու գործողությունները ուղղորդվել են Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի կողմից, որն, իր հերթին, հրահանգներ էր ստացել կենտրոնական կառավարությունից: Ջեմալ Ազմին, որ Տրապիզոնի նահանգապետի պաշտոնում է եղել մինչև 1917թ., իր դաժանության շնորհիվ վաստակել էր «Դագանակով զինված մութասարրիֆ» («Sopali mutasarrif») մականունը:[22]

Տրապիզոնի դատավարության 1919թ. ապրիլի 3-ի նիստում ընթերցված մի կնոջ գրավոր ցուցմունքների համաձայն՝ Ջեմալ Ազմին ժանդարմներին հայ տղամարդկանց նավերով Քումքալե տեղափոխելու հրաման էր տվել: Տեղափոխության ընթացքում բոլորին ոչնչացրել էին (hepsinin itlâf edildigini)՝ մի մասին գնդակահարելով (kursunla), մյուսներին՝ ջրախեղդ անելով (denize atilmak suretiyle): Իսկ երեխաներին, Նիազի էֆենդու ղեկավարությամբ նավակներով հեռացնելուց հետո, ծովն էին նետել (denize atildigini):[23]

Ապրիլի 30-ի նիստում վկաներից Վանի նախկին կուսակալ Նազըմ բեյը ցուցմունքներ է տալիս Ջեմալ Ազմիի կողմից կատարված ոճրագործությունների և Նուրի ու Մեհմեդ Ալի բեյերի կողմից հայ կանանց և երեխաներին ծովը նետելու մասին:[24]

Միևնույն նիստի ընթացքում Ջեմալ Ազմիի դեմ ցուցմունքներ է տալիս նաև Տրապիզոնի վերաքննիչ դատարանի նախագահ Հիլմի բեյը: Ռազմական ատյանի նախագահը, հայերի կոտորածներին անդրադառնալով, շեշտում է տեղի դատախազի միջամտության անհրաժեշտությունը, սակայն վերաքննիչ դատարանի նախագահը հայտնում է, որ տվյալ դեպքում նույնիսկ դատախազը չէր կարող միջամտել:[25]

Մայիսի 10-ի նիստում Ջեմալ Ազմիի ոճրագործությունների մասին վկայություններ է տալիս իրավական տեսուչ Քենան բեյը՝ մասնավորապես նշելով, որ նահանգապետը ջրախեղդ է արել բազմաթիվ հայերի և հույների, իսկ Բաֆրայի կայմակամը սպանվել է (katledildigini) կոտորածների հրահանգները չկատարելու հետևանքով:[26]

Մայիսի 13-ին տեղի ունեցած դատալսման ժամանակ հիվանդանոցում հայերի թունավորման (Ermenilerin hastahanede zehirlendigi) և Սամսունում ու շրջակայքում բազմաթիվ հայերի սպանության (Samson ve civarinda birçok Ermenilerin katledildigini) դեպքերի մասին վկայություններ է տալիս հեծելազորային լեյտենանտ Ավլի Հարուն բեյը, որը նախկինում եղել էր

«Հատուկ կազմակերպության» հրոսակախմբերի հետ համագործակցած գերմանացի սպա Շթանգեի համիարզն ու թարգմանիչը:[27]

Ապրիլի 26-ի նիստում Ալի Սաիբ բեյի կողմից հիվանդանոցում կատարված թունավորումները հաստատող ցուցմունքներ է տալիս վկա տիկին Մանիկը:[28] Նույն դատալսման ընթացքում ընթերցվում է նաև տրապիզոնցի Մուրադի գրավոր վկայությունը՝ Նիազի էֆենդու կողմից լքված գույքի յուրացման վերաբերյալ:[29] Չնայած վերոհիշյալ վկայություններին՝ Նիազի էֆենդին և բժիշկ Ալի Սաիբ բեյը, իբր «որոշակի հանցանշան չլինելու պատճառով» ազատ են արձակվում:

Առողջապահության տեսուչ Ալի Սաիբ բեյի դեմ նոր դատաքննությունը վերսկսվում է 1919թ. հուլիսի 8-ից: Առաջին նիստում ընթերցվում է Տրապիզոնի առողջապահական ծառայության տեսուչ Զիա Ֆուադի զեկույցը, համաձայն որի Ալի Սաիբը բազմաթիվ հայ երեխաների էր սպանել՝ մորֆին ներարկելու միջոցով: Բայց և այնպես, դատարանն արդարացնում է ոճրագործին:[30]

Ի դեպ՝ Տրապիզոնի դատավարության ընթացքում մեկ այլ հետաքրքիր վկայություն էլ է եղել՝ Կովկասից գաղթած մահմեդական և քրիստոնյա վրացիների՝ հայերի կոտորածներին մասնակցելու վերաբերյալ: Կոստանդնուպոլսում հրատարակվող «Ժողովուրդի ձայնը» քաղաքական-հասարակական օրաթերթը տեղեկացնում է, որ Տրապիզոնի դատավարության 14-րդ նիստում ընթերցված ռազմածովային նախարար Ավնի փաշայի գրավոր վկայության համաձայն, Կովկասից Տրապիզոն գաղթած քրիստոնյա և մահմեդական վրացիներից այստեղ կազմվել է «Légion géorgienne» («Վրացական լեգեոն») անունը կրող հատուկ մի գունդ, որը ճանապարհներին հարձակումներ է գործել հայերից բաղկացած քարավանների վրա. «Ծովային նախարար Ավնի փաշա, գրաւոր երկար վկայութեամբ մը կը յայտնէր թէ Տրապիզոնի մէջ ամէն բան կուսակալին ձեռքն էր և ինք իրաւասութիւն չունէր որևէ գործի խառնուելու: «Թէշքիլաթը մախսուսէ», ըսաւ փաշան, պետք չէ շփոթել Ճէմալ Ազմիի կազմած չէթէներուն հետ, որոնք ամեն տեսակ ոճրային գործերու մէջ շատ տխուր դեր մը կատարեցին: Կուսակալը ուզածին պէս կը տեղափոխէր հայ բժիշկներն ու առողջապահական պաշտօնեաները, որոնցմէ ոմանց մահուան լուրը կ' առնէինք: Տրապիզոնի մէջ «Légion géorgienne» անունով մասնաւոր գունդ մը կազմուած էր, Կովկասէն փախած իսլամ և քրիստոնեայ Վրացիներէ: Ասոնք ալ ճամբան շատ գէշութիւններ ըրին Հայերուն»:[31]

Յոզղատի և Տրապիզոնի դատավարություններին առնչվող վերլուծական հոդվածներից հիշատակման է արժանի հատկապես «Ալեմդարի» 1919թ. ապրիլի 25-ի համարում հրապարակված բաց նամակը, որն օրաթերթի տնօրեն Ահմեդ Քադրին ուղղել էր ռազմական ատյանի նախագահ Նազըմ փաշային:[32] Հոդվածի սկզբում Ահմեդ Քադրին իր զարմանքն էր արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ Յոզղատից աքսորված բազմաթիվ հայերի կոտորածների կազմակերպիչները և իրականացնողները, ըստ ռազմական ատյանի, ընդամենը 2 հոգի են եղել, այն դեպքում երբ միայն իրեն հայտնի են այդ խնդրի հետ առնչություն ունեցած առնվազն 20 հոգու անուններ:[33] Հոդվածի հեղինակը հայտնում էր, որ մոտ 40-50 նավաստիներ իրեն պատմել են Ջեմալ Ազմիի և իթթիհատականների կատարած վայրագությունների մասին: Այսպես օրինակ, Տրապիզոնում հայ կանանց և երեխաներին լցրել են նավակները և, շրջահայացորեն ափից բավականին հեռացնելուց հետո ջրախեղդ արել: Իսկ երբ խեղդվողները փորձել են

կառչել նավերի եզրից, կացնով կոտրել են նրանց մատները (sandallarin kenarina dokunmak isteyenlerin balta ile parmaklari dograniyormus):[34]

«Ալեմդարի» տնօրենն իր հոդվածում նշում էր մի քանի պաշտոնյաների մասին, որոնք պաշտոնազրկվել էին կառավարության կողմից՝ կատարված չարագործությունների վերաբերյալ համապատասխան մարմիններին տեղեկացնելու պատճառով: Այսպես օրինակ, Տրապիզոնի մաքսային տեսուչ Բեսիմ բեյը պաշտոնից հեռացվել էր Ջեմալ Ազմիի ոճրագործությունների մասին տեղեկացնելու պատճառով (Bu adam o esnada Cemal Azminin hunharligini lâzim gelen makamata yazdigindan dolayi memuriyetinden uzaklastirilmistir.): Նման ճակատագրի էր արժանացել նաև իրավական տեսուչ Քենան բեյը, որն ազատվել էր աշխատանքից արդարադատության նախարար Հալիլի կողմից: Պաշտոնազրկման պատճառ էր հանդիսացել այն հանգամանքը, որ Քենան բեյը հանդես էր եկել հայերի ողբերգական դեպքերի կապակցությամբ անմիջապես հետաքննություն կատարելու պահանջով (Bu kahraman zat ermeni facianin derhal taht-i muhakemeye alinmasi talep eylediginden dolayi o vakit âdliye naziri bulunan Halil bey tarafindan geri çagirilmistir.):[35]

Ահմեդ Քաղրին հոդվածում իր զարմանքն էր արտահայտում այն փաստի կապակցությամբ, որ ինքը, սովորական քաղաքացի լինելով հանդերձ, ավելի լավ էր տեղեկացված Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների սարսափահարույց (tüylerini ürpertecek derecelerde) մանրամասներին, քան դատարանը: «Ալեմդարի» տնօրենը ռազմական ատյանի նախագահին հարցնում էր, թե ինչով էր պայմանավորված դատարանի անտարբերությունը խնդրի նկատմամբ:[36]

Հոդվածագիրը ռազմական դատարանի նախագահ Նազըմ փաշային ուղղված իր բաց նամակն ավարտում էր ականատեսների վկայություններին առավել լուրջ վերաբերվելու խնդրանքով և հանցագործներին պատժելու կոչով:[37] (Ի դեպ՝ հոդվածի որոշ հատվածի տպագրումն արգելվել էր գրաքննության կողմից):

«Ալեմդարի» 1919թ. ապրիլի 17-ի համարում Ջելալեդդին Արիֆ բեյի գլխավորությամբ ամբաստանյալ նախարարների պաշտպանությունն իրականացնող 16 փաստաբաններին բաց նամակ էր հղել «Ալեմդարի» պատասխանատու խմբագիր Ռեֆի Ջևադ Ուլունայը: Հոդվածում վերջինս իր զարմանքն էր արտահայտում ոճրագործներին պաշտպանելու՝ փաստաբանների մտադրության կապակցությամբ: Ռեֆի Ջևադը նախարարների դատապաշտպաններին կոչ էր անում հրաժարվել նրանց պաշտպանությունից՝ « պատմության մեջ բարի անուն թողնելու համար»:[38]

Հատկանշական է, որ «Ալեմդարի» թե՛ տնօրեն Ահմեդ Քաղրին, թե՛ պատասխանատու խմբագիր Ռեֆի Ջևադ Ուլունայը հետագայում՝ Քեմալական Թուրքիայի նախարարների խորհրդի կողմից 1924թ. հունիսի 7-ին ընդունված որոշման հիման վրա աքսորվել են երկրից:[39] Ինչ վերաբերվում է ամբաստանվող նախարարների շահերի պաշտպան, իրավագիտության պրոֆեսոր Ջելալեդդին Արիֆ բեյին, նա հետագայում գրավել է Անկարայի Ազգային ժողովի, ինչպես նաև արդարադատության նախարարի պաշտոնները:[40]

Այսպիսով, «Ալեմդար» օրաթերթում հրապարակված վկայությունները մեկ անգամ ևս հավաստում են, որ հայերի կոտորածները հրահանգվել և ուղղորդվել են կառավարության կողմից, իսկ տեղահանության իրական նպատակն է եղել ամբողջ հայության բնաջնջումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Taner Akçam, Ermeni tabusu aralanirken diyalogtan baska çözüm var mi?, Istambul, 2000, s. 85-86.
[2] Նույն տեղում, էջ 88-92:
[3] Գրիկէր, Եոզղատի հայասպանութեան վավերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 34:
[4] Meydan Larousse «Büyük lugat ve ansiklopedi», Birinci cilt, Istanbul, 1985, s. 296.
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:
[7] Геноцид - преступление против человечества (Материалы I Московского Международного Симпозиума 18-19 апреля 1995г.), Отв. ред. академик НАН Республики Армения В. А. Микаелян; Ваагн Дадрян, Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, Москва, 1997, с. 22
[8] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի (կազմ.՝ Փափազյան Ա.), Ե., 1989, էջ 166:
[9] Геноцид-преступление против человечества...,с. 32.
[10] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության..., էջ 170-173:
[11] Նույն տեղում:
[12] Taner Akçam, նշվ. աշխ., էջ 90:
[13] Taner Akçam, Insan haklari ve Ermeni sorunu. Ittihat ve Terakki'den Kurtulus savasi'na, 2 baski, Istanbul, 2002, s. 303.
[14] Геноцид-преступление против человечества..., с. 33-34.
[15] "Alemdar", Istanbul, 26 mart, 1919.
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում:
[19] Նշվ. պարբ., 28 մարտի, 1919թ.:
[20] Նույն տեղում:
[21] Նույն տեղում:
[22] Taner Akçam, Insan haklari ve Ermeni sorunu...., s. 232-233.
[23] Նշվ. պարբ., 4 ապրիլի, 1919թ.:
[24] Նշվ. պարբ, 1 մայիսի, 1919 թ.:
[25] Նույն տեղում:
[26] Նշվ. պարբ., 11 մայիսի, 1919 թ.:
[27] Նշվ, պարբ., 14 մայիսի, 1919 թ.:
[28] Նշվ. պարբ., 27 ապրիլի, 1919 թ.:
[29] Նույն տեղում:
[30] Геноцид-преступление против человечества..., с. 33.
[31] «Ժողովուրդի ձայնը» (Պոլսո քաղաքական եւ հասարակական օրաթերթ), խմբագրապետ՝ Տիգրան Զաւէն, 6 մայիսի, 1919 թ., թիւ 172:
[32] "Alemdar", 25 nisan, 1919, Ahmed Kadri, Divan-i harbi reisi Nazim pasa hazretlerine açik mektup.
[33] Նույն տեղում:
[34] Նույն տեղում:
[35] Նույն տեղում:
[36] Նույն տեղում:
[37] Նույն տեղում:
[38] Այդ մասին տե՛ս «Ժողովուրդի ձայնը»...,1 մայիսի, 1919 թ., թիւ 168:
[39] http://www.tekadam,8 k.com/yuzellikler.html.
[40] Taner Akçam, Insan haklari ve Ermeni sorunu..., s. 574.

ՀԱՎԵԼՎԱԾ I

دیوان حرب رئیسی ناظم پاشا حضرتلرینه آیچق مکتوب

پاشا حضرتلری ،

مخالف موافق بلکه افراد ملت عادل و منصف بر ذات اولدیغکزی مطلقاً تصدیق ایتمکده‌در . بو مناسبته ذاتعالیکزه اوقق برحسب‌حال ایتمک ایستیورم .

25/1/919
Nikan
آناطولیدن

سابقه‌یه مبنی قدر چوق وهم‌ده تهجیر وتخلیه اوغرامش موافقی مقیاً طولاشمش اولق صلتیله کورمکده‌یم . مثلا آکره وحوالیسی اک چوق تهجیر وتخلیه اوغرامش برحلدر ، ساده ا... ارمنیلرك عددی یکرمه طولدیغی حالده او حوالیده بالکز تهجیر وتخلیل اداره واجرا ایدلر ، مطلوب کال ایله اولدیغی سته‌یه محکوم ایدیلان زاندارمه طابیلی توفیق‌کردنی عبارتدی ؟ بو مسته‌ده ملاحظه‌دار اولانلردن هان یکری قدرنی بلدات بنه‌کز بیلکده‌یم . هم بوکا نه حاجت ؟ کلات عاکات اتاملته برچوق اسبابی کچیکه دلت ایلمکه سزك کبی عادل بر ذاتك درحال بونلرك جلبی واوزم کورملرك موقوفاً عاکه‌لرك سرعتله اجراسی لازمکلیدی . بو خصوصاته نیجا نه کبی اسبابدن طولایی اهمیت ورلیور ؟

بز ، حقوق مدنیه‌مز قسماً مسلب برصورتده مثلی بولندیغز عقیده‌ده . مثلا سیتوبده ایکن بو کون عاکمی دولم ایتمکده بولنان طرزون تهجیر وتخلیه انسانك تورلی اورتمجه‌لك درجه‌لرده نه‌کبی مصیبات کچیردیکنی بر صنف وسیه‌مز اولانلاسته وعما اوکرندیکز حالده‌در وناتانه ملك عکسنه طیه‌کزك اک اوقق طرفاته اندر اوکرنمی ممکن اولمیوردی ؟

سیتوبده بولنیورکن صباحلری طرزون ایله استانبول آرسنده قیاق صورتیله اجیلاوزق طاشیان لاز قابیلر ایله کوریشور و زوالی ارمنی وطناشلرمزك وال جال حزنی و اکاد چیسه منسوب رقای حیاتی طرشدن نه صورتله عو و انا ایدلکلرینك تفصیلاته مستعد اولوردق . بو زوالیلر ، قادین وحتی بعض وقت چوجقلرده دلیل اولمیوب حالده روماتیاموسق ایدیلمکلری یاتیلیق ومتعاقبه طولدیریلیور وساحلدن هان برساعت آیلرلری متعاقب جلسی دکزه دوکولیورلرمش . دکزدن بوزمرك صدالك کناریه طوقونق ایستیانرك بالکه ایله پارمقلری طوغرامیورمش .

بو قابیلر آیلی صحه‌لری بلدات کورمك قطعاً هان [illegible] کیبیدن برچوق آرصاشلرمزه برابر دفعات ایله دیکدك . نیجا او آرصاشلر مزه بولنمش ناموسلی ، برطرف ذواتك بوایدمکی اسلوب ماتریه مراجعت صورتیله بو جامع تظاهرات پرطمزی ؟

ایته بنه‌کز سزه اولوقت طرزون رسومات پاشی مدیرتنه ایکن الیوم رسومات مفتشلرندن بولنان بسیم بك تامته غایت عفیف بر ذات کوسترمشدی . بو آدمه اولیاده جال مزمنك نوخوارلق لازم کلن مقاماته یازدیغمز طولایی مأمور تعدیلی اوزرك قلاشه بولنه‌ده بر ایکنجی ده جورومه بولندیغز اثناده رفیق خالد بك تامته مصادف اولدیغز طرزون حقیله متفکلکدن مذولا استانبوله عودت ایتمکده بولنان کتخدا بك تامته بر کنجه بو قهرمان ذات اونی بلاینك سیلرینك درحال تحت عاکمه آلتسی طلب ایدیکندن طولایی او وقت حقیله ناظری بولنان خلیل بك طرفندن کری چاغیرلدی . کتخدا بك وظیفه‌سیمی ایفا ایتمکه قادر ایدیمیورك بو جاهدن تماماً اولدیغی بعض صحه‌لرك بلدات نفوذلرنی یله ضبط ایلدی . بو تیزقلی آدم آنلیمه بلدات (٥٠٠٠) ارمنی قتل ایلمش اولان قوسومه‌جیلر زندن محدیاش نامنده بر خوزوزدن بحث ایدیکی کبی تمامیله عاکمه‌لیمه زنده تمالی ایلمیوزدی . شمدیك بو صورتله بیسی طوتیورمکری استلزم ایدر و بعضا جریان ایلمیك بر حاکمه مستقله‌یی دعا زاده تمنی ایله طرفلرنی کن آدمی جلب ایدیرمکلری ورومیکی ایضاحات ایله معموم بشرك بیك جانلرك صیح بر ملاحظه اولمادیغی اثبات ایلمیکلری و جرملری شدتك جرایمارده‌ده جنکلری قوماً مأمول ایدرز . اثبات بزی حقکوز جرملری صاحلرنی ایله اتهام ایدیورز . حالبوکه اولری صاحلرنی مطلقاً اصلا خاطرو خیالنده کچمز . چونکه بایلان بونون جانلرنی صغول اولان ملت دکل . اکاد چیسیدر . ملت اصومدر . بو حقیقتك تامیه تظاهری ایسه اکنوم جرملرك طلباً جرمسی ایله قابلدر . بالرتبه تقدیم استدعات الزام ایدم .

احمد قدری

«Հայրենիք», «Отечество», 25 սեպտեմբեր, 1919թ.

Հարգելի՛ նախագահ,

Միաձայն կերպով կարող ենք հաստատել, որ Դուք հանդիսանում եք արդար և անաչառ մի անձնավորություն, հատկանիշներ, որ ժառանգել եք մեր ժողովրդից:

Այդ իսկ պատճառով կցանկանայի կարճ և անկեղծ մի խոսակցություն ունենալ Ձերդ մեծության հետ: Ես, աքսորված լինելու պատճառով, ականատես եմ եղել Անատոլիայի բազմաթիվ շրջաններում իրականացված տեղահանությանն ու կոտորածներին:

Տեղահանությանն ու կոտորածներին առավել ենթարկված շրջաններն են հանդիսանում Մուշը և Անկարան: Մի շրջան գոյություն ունի, որից տարագրված հայերի թվաքանակը հազարների է հասնում. մի՞թե այդ շրջանում տեղահանությունն ու կոտորածները կազմակերպողների և իրականացնողների քանակը սահմանափակվում է մահապատժի ենթարկված Քեմալ և 15 տարվա բանտարկության դատապարտված Թեվֆիկ բեյերով: Անձամբ միայն ինձ հայտնի են այդ խնդրին առնչված համարյա 20 հոգու անուններ:

Իսկ ո՞րն է դրա անհրաժեշտությունը:

Երբ Քեմալի դատավարության ընթացքում մի շարք անուններ բացահայտվեցին, անհրաժեշտ էր, որ դրանք պատշաճ ուշադրության արժանացվեին. Ձեր նման արդարադատ անձնավորությունը նրանց անմիջապես ծանուցագրեր ուղարկեր, անհրաժեշտության դեպքում մի քանիսին ձերբակալեր և արագ կերպով իրականացներ նրանց դատաքննությունը: Արդյոք ի՞նչ պատճառներից ելնելով է, որ կարևորություն չի տրվում այդ խնդրին:

Այդ ինչպե՞ս է, որ մենք մեր քաղաքացիական իրավունքը մասամբ կորցնելով՝ այն տարածքներում, ուր աքսորվել էինք՝ Մուշում և Սինոպում եղած ժամանակ, պաշտոնական անձ չհանդիսանալով հանդերձ, տեղյակ ենք, թե ինչ աստիճանի՝ մարդուն սարսափեցնող մակարդակով են տեղի ունեցել Տրապիզոնի տեղահանությունն ու կոտորածները, որոնց դատաքննությունը ներկայումս դեռ շարունակվում է, իսկ նման հնարավորությունների տեր Ձեր հարգարժան դատարանը չի կարողանում խորանալ մանրամասների մեջ:

Սինոպում մենք հանդիպեցինք առավոտները Տրապիզոնից դեպի Ստամբուլ արագ կերպով իրեր և սննդամթերք տեղափոխող լավ նավաստիների և կարողացանք մանրմասներ իմանալ այն մասին, թե ինչպես են մեր խեղճ հայ հայրենակիցները ոչնչացվել և բնաջնջվել վալի Ջեմալ Ազմիի և իթթիհատական հրոսակախմբին պատկանող չարագործ գործակիցների կողմից: Պարզվում է, որ այս խեղճերին՝ կանանց և, նույնիսկ, երբեմն երեխաներին էլ ներառյալ, Ռումինիա ուղարկելու պատրվակով լցրել են առագաստանավերն ու մակույկները և շրջահայացորեն ափից մեկ ժամ հեռացնելուց անմիջապես հետո ծովն են նետել: Իսկ երբ ծովում խեղդվողները փորձել են կառչել առագաստանավերի եզրերից, կացնով կոտրել են նրանց մատները:

Անձամբ ականատես չենք եղել այդ արյունոտ և ցավոտ տեսարաններին, սակայն մի քանի ընկերներով ուշադրությամբ լսել ենք այդ ամենը սեփական աչքով տեսած 40-50 հոգու հասնող նավաստիների պատմածը: Բայց մի՞թե այդ պահին Տրապիզոնում գտնված պատվավոր և անկողմնակալ անձանց՝ այդ կապակցությամբ ունեցած տեղեկությունները ստանալով՝ կարողացանք բացահայտել ողջ ողբերգությունը:

Այն ժամանակվա Տրապիզոնի մաքսային գլխավոր վարչության ծառայող, ներկայումս մաքսային տեսուչ Բեսիմ բեյին ներկայացնում եմ որպես շատ ողջախոհ մի անձնավորության: Այս մարդը պաշտոնից հեռացվել է՝ Ջեմալ Ազմիի դաժանության մասին անհրաժեշտ մարմիններին տեղեկացնելու պատճառով:

Իսկ երկրորդին՝ Քենան անունը կրող երիտասարդին հանդիպել եմ Չորումում՝ Ռեֆիկ Հալիդ բեյի տանը: Քենան բեյին ազատել էին Տրապիզոնի իրավական տեսչի պաշտոնից, որից հետո նա վերադարձել էր Ստամբուլ: Այս հերոսական անձնավորությունը հետ էր կանչվել այն ժամանակվա արդարադատության նախարար Հալիլ բեյի կողմից՝ հայերի հետ կապված ողբերգական դեպքերի կապակցությամբ անմիջապես հետաքննություն կատարելու պահանջով հանդես գալու պատճառով: Քենան բեյը չէր բավարարվել միայն իր պաշտոնական պարտականությունների իրականացմամբ. անձամբ լուսանկարել էր այդ ողբերգական տեսարանները, որոնց ականատեսն էր

դարձել: Այդ ազնիվ անձնավորությունը ինձ պատմել է Ամասիայում անձամբ (...) հայեր սպանած և սրտխառնոց առաջացնող մուհաջիրներից Մեհմեդ Քաբաշ անունը կրող մի արնախում մարդու մասին, որի անունը, սակայն, չենք հանդիպում դատական արձանագրություններում:

Աղերսում ենք, որ թե՛ լուրջ վերաբերվեք ականատեսների վկայություններին և թե՛ այսուհետ տեղի ունենալիք դատավարությունների ընթացքում յուրաքանչյուր վկայակոչված անձնավորության ծանուցագիր ուղարկեք:

Հուսով ենք, որ տրվելիք բացատրությունների միջոցով կհաստատվի, որ մեր անմեղ ազգը ոչ մի կապ չի ունեցել ավազակախմբերի կողմից կատարված հանցագործությունների հետ, իսկ հանցավորները հաստատապես կպատժվեն:

Արտասահմանցիները մեզ մեղադրում են վերոհիշյալ հանցագործներին թաքցնելու մեջ, մինչդեռ ժողովրդի մտքով երբեք չի անցել նրանց թաքցնել, որովհետև կատարված հանցագործությունների պատասխանատուն հանդիսանում է ոչ թե ժողովուրդը, այլ իթթիհատական ավազակախումբը: Ժողովուրդն անմեղ է: Իսկ ճշմարտության լրիվ բացահայտումը իրականանալի է բոլոր հանցավորների դատապարտմամբ միայն:

Առիթից օգտվելով՝ արտահայտում եմ խորին հարգանքներիս հավաստիքը:

Ահմեդ Քաղրի
«Ակեմդար», 25 ապրիլի, 1919թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Տեղահանության դատավարությունը սկսվեց»

Երեկ ժամը մեկն անց հիսունհինգից սկսած շարունակվեց Յոզղատի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատարանի կազմը բաղկացած էր ներքոհիշյալ անձանցից. նախագահ՝ Մուստաֆա Նազըմ փաշա, անդամներ՝ Զեքի Մուստաֆա փաշա, Ալի Նազըմ փաշա և գնդապետ Ռեջեբ Ֆերդի բեյ: Դատախազի պաշտոնում հանդես էին գալիս Հարալամբոս էֆենդին և նրա տեղակալը: Դատարանի կազմի՝ դատական դահլիճ մտնելուց հետո նախագահի հրամանով Թեվֆիկ և Ֆիյազ բեյերը դահլիճից դուրս եկան: Ներս բերվեց Քեմալ բեյը, և հարցաքննությունն սկսվեց.

Նախագահ - Ի՞նչ ձևով եք տեղահանության վերաբերյալ հրաման ստացել՝ բանավո՞ր, թե՞ գրավոր, անուղղակի՞ կերպով, թե՞ ուղղակի:

Քեմալ բեյ - Տեղահանության ընթացքում եղել եմ Բողազլյանի կայմակամը: Հայերին տեղահանելու հրաման եմ ստացել, որն էլ հաղորդել եմ ժանդարմերիայի հրամանատարին: Կազայի կենտրոնում տեղահանությունը կատարվում էր ժանդարմերիայի հրամանատարի միջոցով, իսկ կազայից դուրս բնակվողները ուղարկվում էին նահիեի ղեկավարի կողմից:

Նախագահ - Ու՞մ էր վերաբերվում տեղահանությունը: Արդյո՞ք բացառություններ արվում էին:

Քեմալ բեյ - Տեղահանությունը վերաբերվում էր հայերին: Բացառություններ կատարելու վերաբերյալ շատ հրամաններ եմ ստացել: Դրանց տարաբնույթ լինելու պատճառով չեմ կարողանում մտաբերել: Բացառիկ դեպք էին համարվում բողոքականները և զինվորական տարիքում գտնվողները: Տեղահանության հրամանը հասել է հուլիսի 21-ին, սակայն չեմ հիշում, թե երբվանից է սկսել գործադրվել: Օգոստոսի 6-ին Յոզղատ էի գնացել: Կարծեմ՝ վերադարձիս արդեն ավարտվել էր:

Նախագահ - Քանի՞ ընտանիքից և առավելագույնը՝ քանի՞ բնակչից էին բաղկացած լինում տեղահանվածների քարավանները:

Քեմալ բեյ - Չգիտեմ, թե քարավանները քանի հոգուց են բաղկացած եղել Յուցակները կազմվում էին ժանդարմի կողմից:

Նախագահ - Պետք է որ իմանաք, թե քանի ընտանիք է ուղարկվել:

Քեմալ բեյ - Ժանդարմն էր կազմում: Ձեր խոնարհ ծառան տեղյակ չէ:

Նախագահ - Ո՞ր ճանապարհներով էիք ուղարկում: Այսինքն՝ ոստիկանին հրահանգում էիք՝ «սրանց տվյալ ճանապարհով տվյալ վայրը հասցրեք»:

Քեմալ բեյ - Այդ հարցը կարգավորվում էր կառավարության կողմից, իսկ ժանդարմի կողմից՝ հսկվում:

Նախագահ-Ձեզ էր վստահված ամբողջ բնակչության հողատարածքը, տունը և պատիվը՝ առանց սեռի և հավատքի խտրականության: Տեղահանության ընթացքում այդ ուղղությամբ ի՞նչ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկեցիք:

Քեմալ բեյ - Նրանց, ամենայն հավանականությամբ, անվտանգ կերպով են տեղափոխել, էֆենդի:

Նախագահ - Տեղահանության գործին մասնակից դարձրե՞լ եք յոզղատցի որոշ անձանց: Եվ եթե դարձրել եք՝ առանձին-առանձի՞ն, թե՞ միասին:

Քեմալ բեյ - Այո, փաշա, մի անգամ 3 հոգու ընդգրկել եմ: Պատճառն էլ բռնություններից զերծ պահելն էր:

Դատախազ - Աբդուլլահ անունը կրող մեկին ճանաչու՞մ եք:

Քեմալ բեյ - Ձերբակալվածներից է, չէ՞, ճանաչում եմ:

Դատախազ - Քարավանը հսկողներից է եղել:

Քեմալ բեյ - Այո:

Նախագահ - Առանձին-առանձի՞ն, թե՞ միասին են հսկել:

Քեմալ բեյ - Միասին են ուղարկվել, էֆենդի:

Դատախազ - Նա ինչու՞ է բնակչության մեջ խառնակչություններ հրահրել, այն դեպքում, երբ կառավարությունը նրան էր վստահել կարգուկանոնը պահպանելու խնդիրը:

Քեմալ բեյ - Անտեղի երևույթ ի հայտ չգալու համար:

Դատախազ - Պետական պաշտոնյաների առկայության պայմաններում նրանց ևս ուղարկելը հատուկ նպատակ էր հետապնդում:

Քեմալ բեյ - Ոչ մի հատուկ նպատակ չկար:

Նախագահ - Դե լավ, ասեցիք, որ [քարավանների] պաշտպանությունը կատարվում էր ժանդարմերիայի հրամանատարի միջոցով:

Քեմալ բեյ - Բավականաչափ ժամանակ է անցել. չեմ կարողանում մտաբերել, թե ի՞նչ անհրաժեշտության հիման վրա էր:

Դատախազ - Երբ Քեմալ բեյը Յոզղատում էր գտնվում, 331թ. օգոստոսի 16-ի ամսաթվով մի նամակ է կնքում և ծրարի վրա նշում. «Հույժ կարևոր է: Տվյալ նամակը պետք է արձանագրվի, ժամն ու բոպեն նշվի Բաթթալ գյուղում՝ Բաքըրջը Մահմուդի և նրա ընկերների կողմից, ապա՝ պետք է բացվի և համատեղ ընթերցվի: Անհրաժեշտ է գործել [նամակում] բովանդակվող հայրենասիրական մղումներին համապատասխան»: Նամակում հրահանգվում էր հայերի գույքը պահել Օսման փաշա դերվիշների մենաստանում և դուռը կնքել:

Քեմալ բեյ - Ձեր խոնարհ ծառայի ձեռագիրը չէ: Բնականաբար, նման բան չէի կարող գրած լինել:

Նախագահ - Իսկ վրայի կնի՞քը:

Քեմալ բեյ - Իմը չէ: Չկարողացա նույնիսկ հասկանալ, թե ո՞ր վարչության կնիքն է:

Նախագահ - Ի՞նչ կարող եք այս կապակցությամբ ասել՝ ի պաշտպանություն Ձեզ:

Քեմալ բեյ - Իմ կողմից գրված փաստաթղթում, ընդհակառակը, դրանք պահպանելու հրահանգ եմ տվել:

Նախագահ - Ժանդարմերիայի սերժանտ Շյուքրուին Ձեր ստորագրությամբ մի փաստաթուղթ է ուղարկվել, որում գրել եք, թե նեցուկ լինեն պատասխանատու պաշտոնյաներին: Նման իրավասություն ունեի՞ք:

Քեմալ բեյ - Չեմ կարողանում հիշել, թե ի՞նչ անհրաժեշտության հիման վրա է եղել:

Նախագահ - Այդ մարդիկ «Լքված գույքի» հանձնաժողովի հետ որևէ առնչություն ունեցե՞լ են:

Քեմալ բեյ - Հավանաբար:

Նախագահ - Ծանոթացե՞լ եք այդ անձանց բնութագրին:

Քեմալ բեյ - Ո՛չ:

Նախագահ - Ինչպե՞ս եք պաշտոնում նշանակել այն անձանց, որոնց բնութագրերին չեք ծանոթացել:

Քեմալ բեյ - Հավանաբար նրանց համար երաշխավորել էին:

Նախագահ - Նախաքննության ընթացքում Ձեր կողմից տրված ցուցմունքների համաձայն՝ տեղահանությանը վերաբերող փաստաթղթերի մի մասը կարդալուց հետո այրելու հրաման եք տվել, իսկ մնացածը որտե՞ղ է:

Քեմալ բեյ - Բոլորն էլ պահպանվել են, էֆենդի՛: Ճիշտն ասած, այդ օրը շատ հոգնած էի, [ճանապարհին] ութսուն հոգով մի վագոնում էինք: Եվ քանի որ քունս տանում էր, չգիտեմ՝ ինչպես եմ ցուցմունքներ տվել:

Դատախազ - Ես, Հետաքննիչ հանձնաժողովի անդամ հանդիսանալով, հայտնում եմ, որ ասվածը չի համապատասխանում իրականությանը. 3-4 ժամ մտածել է, հետո՝ գրել:

Քեմալ բեյ - Դուք այնտեղ չեիք, էֆենդի՛: Իմիջիայլոց, կառավարությունը տեղահանության հրամանը նույն կերպ էր հայտնել Օսմանյան կայսրության բոլոր կասաբաներին և վիլայեթներին: Եթե նման հրահանգ ստացված լիներ, մյուս շրջաններում ևս կարելի էր այդ ուղղությամբ հետաքննություն կատարել, սակայն նման հրահանգ ո՛չ եղել է, ո՛չ էլ ստացել եմ:

Նախագահ - Յոզղատի մյուֆթին Ձեզ խրատել է, իսկ դուք նրան ասել եք. «Դու կառավարությունից բարեգո՞ւթ ես»:

Քեմալ բեյ - Դա եղել է ոչ թե Յոզղատի, այլ Բողազլյանի մյուֆթին: Մենք միասին էինք զինկոմիսարիատում: Նման բան չի եղել, այնտեղ մեզնից բացի այլ անձինք էլ էին ներկա:

Նախագահ - Ի՞նչ եք արել տեղահանության համար:

Քեմալ բեյ - Ոչինչ էլ չեմ արել:

Նախագահ (դատական կատարածուին) - Քեմալ բեյին տարե՛ք, թո՛ղ գա Թեվֆիկ բեյը:

Նախագահ (Թեվֆիկ բեյին)-Տեղահանությանը ենթակա անձանց տարագրելու հանգամանքների վերաբերյալ որևէ հրաման ստացե՞լ ես և եթե ստացել ես, բանավո՞ր է եղել, թե՞ գրավոր:

Թեվֆիկ բեյ - Տեղահանությանը վերաբերող հրամանը տրվել է կառավարության կողմից, դրա մասին ստացվել է նաև տեղեկագիր: Մի մասին բանավոր եմ հայտնել, մյուսին՝ գրավոր ծանուցագրի հիման վրա: Հրամանները ստացել եմ գրավոր:

Նախագահ - Տեղահանվածներին առանձի՞ն քարավաններով էիք ուղարկում, թե՞ միասին: Անվտանգության համար քարավաններին քանի՞ ժանդարմ էիք կցում: Դուք նրանց հե՞տ.եք եղել: Ի՞նչ եք ձեռնարկել սենդի ուղղությամբ: Ի՞նչ քանակությամբ իրեր էիք թույլ տալիս, որ իրենց հետ վերցնեն:

Թեվֆիկ բեյ - Ուղարկել եմ քարավան առ քարավան, անվտանգության համար ուղեկցորդ եմ նշանակել՝ քանակին համապատասխան: Ուղեկցել եմ Սվաս գնացող քարավանը: Կենտրոնից 4 ժամ հեռանալուց հետո մութասարրիֆ Ջեմալ բեյից վերադարձի և քարավանը Ջնադ բեյին հանձնելու հրահանգ եմ ստացել, որի հիման վրա կես ճանապարհից վերադարձել եմ: Ապահովել եմ նրանց անվտանգությունը՝ բոլոր տեսանկյուններից:

Նախագահ - Քեմալ բեյն ասում է, թե տեղահանության ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու խնդրով զբաղվում էր ժանդարմերիայի հրամանատարը:

Թեվֆիկ բեյ - Ինչպե՞ս: Եթե կառավարությունը միջոցներ չէր տրամադրում, ես ի՞նչ կարող էի ձեռնարկել, իմ գրպանի՞ց միջոցներ հատկացնեի: Այդ մասին պետք է կառավարությունը հոգար:

Նախագահ - Դուք պետական պաշտոնյա՞ էիք համարվում:

Թեվֆիկ բեյ - Իհարկե՛, պետական պաշտոնյա էի:

Նախագահ - Տեղյակ չէի՞ք, որ բնակչության շարքերում չունեորներ կային:

Թեվֆիկ բեյ - Ի՞նչ անեի, էֆենդի՛: Մարդկային պարտքս կատարելով՝ ստիպված էի նրանց կերակրել, այդպես էլ վարվեցի:

Նախագահ - Եթե մարդկային պարտքը կատարելու փոխարեն Ձեր պաշտոնական պարտականությունները կատարեիք, ավելի ճիշտ չէ՞ր լինի:

Թեվֆիկ բեյ - Մտքովս չանցավ դրամ պահանջել:

Նախագահ - Ճանապարհին քարավանը լեյտենանտին հանձնելիս վկայագիր վերցրե՞լ եք:

Թեվֆիկ բեյ - Չեմ մտաբերում, թերևս վերցրել եմ:

Նախագահ - Ձեր կողմից ուղարկված քարավանում որևէ դեպք արձանագրվե՞լ է:

Թեվֆիկ բեյ - Ո՛չ, էֆենդի՛, չի արձանագրվել:

Այս ցուցմունքները տալուց հետո Թեվֆիկ բեյը դուրս տարվեց. բերվեց Ֆիյազ բեյը:

Նախագահ (Ֆիյազ բեյին) - Յոզղատում վակֆային վարչությունից բացի այլ ծառայություն գործե՞լ է:

Ֆիազ բեյ - Ո՛չ:

Նախագահ - Վկայություն են տվել, ըստ որի դու նախագահել ես Յոզղատին վերաբերող գործերը, ի՞նչ բնույթի էին դրանք:

Ֆիազ բեյ - Ձեր խոնարհ ծառան այդ կազմակերպության հետ առնչություն չի ունեցել:

Նախագահ - Կարո՞ղ ես մատնանշել այդ ցուցմունքը հաստատող վկաներ:

Ֆիազ բեյ - Այո՛, էֆենդի՛: (Մի քանի անձանց անուններ է տալիս):

Նախագահ - Վկայություն են տվել, ըստ որի այն մատանին, որն այժմ կրում ես, ձեռք ես բերել տեղահանության ժամանակ:

Ֆիազ բեյ - Այն գնել եմ աճուրդում 2600 ղուրուշով: Դա հաստատող վկաներ ևս կարող եմ ներկայացնել:

Նախագահ - Ընդգրկված եղե՞լ ես «Լքված գույքի» հանձնաժողովի կազմում:

Ֆիազ բեյ - Այո՛, զբաղվել եմ իրագործման խնդիրներով:

Այդ պահին բերվեցին նաև Թեվֆիկ և Քեմալ բեյերը:

Նախագահ (Քեմալ բեյին) - Տեղահանության խնդիրը վերաբերվում էր ժանդարմերիայի հրամանատարությանը: Թեվֆիկ բեյը հայտնեց, թե վկայագիր է վերցրել:

Քեմալ բեյ - Ո՛չ, ես տալիս էի ստացված հրամանը, իսկ նրանք՝ կատարում: (Ընթերցվերին հարցաքննության ընթացքում Քեմալ բեյին տրված այն հարցերը, որոնց նա պատասխանել էր առանձին):

Դատախազը, 2 կողմերի ձևավորմանը վերաբերող քննարկումները ներկայացնելով, հայտնեց, որ զինվորական քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ հասարակական հայցվորները չեն կարող դատարանում ներկա գտնվել: Հասարակական հայցվորը, խնդիրը երկար քննարկելուց հետո, փորձեց հիմնավորել բոլոր դեպքերում իր ներկայության անհրաժեշտությունը և կոչ արեց չխախտել նախկին ռազմական ատյանի որոշումը:

Այնժամ դատարանի կազմը հեռացավ խորհրդակցական սենյակ՝ խնդիրը քննարկելու նպատակով: 1 ժամ, 10 րոպե տևողությամբ քննարկումից հետո դատարանի կազմը վերադարձավ դահլիճ: Ընդունված վճռի կարճ բովանդակությունը կայանում էր հետևյալում. հասարակական հայցվորի՝ ռազմական ատյանում ներկա չլինելու վերաբերյալ ընդունված որոշումների բազմաթիվ դեպքեր են գրանցվել:

Հասարակական հայցվոր հանդիսացող Ռեմզի էֆենդին լքեց դահլիճը:

Այնուհետև կրկին դատարան կանչվեց Օժենի անունը կրող այն վկան, որին նախագահը խնդրեց կրկնել նախկին ռազմական ատյանին տրված ցուցմունքները: Օժենին, նախքան իր վկայությունները կրկնելը, հայտարարեց. «Այս անգամ ավելի մանրամասն եմ ներկայացնելու, քանի որ արդարադատություն չեմ տեսնում դատարանում»: Վկան ցուցմունքներ տվեց առ այն, որ առավոտյան, երբ ոստիկանը վկայություն տալու համար իրեն դատարանի ծանուցագիր էր բերել, չափազանց գեղեցիկ է համարել իրեն և հանդես եկել մի մահմեդականի տալու առաջարկով:

Դատախազը նրան հարցրեց վերոհիշյալ ոստիկանի համարը: Պարզվեց, որ 2021 համարովն է եղել:

Ֆիյազ բեյն Օժենի ցուցմունքը բացարձակ զրպարտություն համարելով՝ հանդես եկավ իր նախկին ցուցմունքն ընթերցելու պահանջով: Այն ընթերցվեց:

Նախագահ (Թեվֆիկ բեյին) - Տեղահանվածների ձեռքերը կապու՞մ էիք:

Թեվֆիկ բեյ - Այո՛, Ջեմալ բեյի օրոք ապահովության նպատակով մինչև կասաբայից դուրս գալը կապած էինք տանում:

Դատախազ - Հարկադրված եմ հերքել Ջեմալ բեյի պես պատվարժան պետական պաշտոնյային զրպարտող մեղադրանքը:

Այնուհետև ընթերցվեց Մարի անունը կրող մի կնոջ՝ Կայսերիի դատախազության կողմից տարված հետաքննության ընթացքում տված ցուցմունքը, որն ուղղված էր մեղադրյալների դեմ: Նիստի ավարտին Ջեմալ, Թեվֆիկ և Ֆեյազ բեյերը հերքեցին վկայությունը՝ նամակի բովանդակությունը լրիվ զրպարտություն համարելով:

Քանի որ արդեն ժամը 17-ն անց էր 30 րոպե, որոշվեց դատը շարունակել առաջիկա չորեքշաբթի օրը՝ ժամը 10-ին: Դատարանի կազմը լքեց դահլիճը:

«Ալեմդար», 26 մարտի, 1919թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 3

«Տեղահանության և կոտորածների դատավարությունը»

Երեկ կեսօրից հետո ժամը 14:25-ից սկսած Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակվեց Յոզղատի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատախազի պաշտոնում էր տեղակալներից Քուդրեթ Աթի բեյը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց հետո Ֆիյազ և Թեվֆիկ բեյերը դուրս տարվեցին. սկսվեց Ջեմալ բեյի առանձին հարցաքննությունը:

Նախագահ -Ո՞վ էր Յոզղատի բաժանմունքի ղեկավարը:

Ջեմալ բեյ - Ձեր խոնարհ ծառայի օրոք Մուստաֆա և Սելամի բեյերն էին:

Նախագահ - Ճի՛շտն ասա, հայերին բնաջնջելու մտադրություններն անձնակա՞ն, թե՞ մեկ այլ դրդապատճառ ունեին:

Ջեմալ բեյ - Քա՛վ լիցի, փաշա՛, հայերին բնաջնջելու հրահանգ երբեք չեմ տվել:

Նախագահ - Մի՞թե Յոզղատը գործողությունների թատերաբեմից դուրս էր:

Ջեմալ բեյ - Ո՛չ, էֆենդի՛:

Նախագահ - Ինչու՞ մի խումբ փախստականներ բռնագաղթեցվեցին առանց փոխադրման միջոցների, ծայրաստիճան չքավորության պայմաններում:

Ջեմալ բեյ - Միջոցներ չկային, էֆենդի՛, ես կատարել եմ կառավարությունից ստացված հրամանը: Մահմեդական փախստականներն անգամ միևնույն պայմաններում էին:

Նախագահ - Ըստ Ձեզ, ոչ մի չարագործություն չի՞ եղել:

Ջեմալ բեյ - Ո՛չ, ըստ իս՝ բացարձակապես չի եղել:

Նախագահ - Այդքան վկաների ցուցմունքները, նույնիսկ մութասարրիֆ Ջեմալ բեյի՝ Ձեզ վերաբերող վկայությունը խաբեությո՞ւն է:

Ջեմալ բեյ - Էֆենդի՛, վկաների բոլոր ցուցմունքներն էլ սուտ են: Մութասարրիֆ Ջեմալ բեյն էլ, կարծեմ, ասում էր, որ լսել է և ոչ թե տեսել:

Նախագահ - Ջեմալ բեյը Ձեզնից նեղսրտելու առիթ երբևէ ունեցե՞լ է:

Ջեմալ բեյ - Այո՛, Էֆենդի՛: Մի արձանագրության խնդրի հետ կապված մեր միջև մի փոքր գժտություն եղավ: Նա մի բան էր առաջարկել, որը ես պետական խորհրդի որոշմանը հակասող գտա և արձանագրությունը չստորագրեցի:

Ջեմալ բեյը դուրս եկավ, ներս բերվեց Թեվֆիկ բեյը: Կրկին ընթերցվեց նրա կողմից լուծարված ռազմական ատյանին ներկայացված զեկուցագիրը, որում նկարագրվում էին հայ ավազակների կողմից կատարված մի շարք չարագործություններ:

Նախագահ - Ձեզ հայերին արմատախիլ անելու հրամա՞ն է տրվել: Ձեր զեկուցագրում նման բան էր գրված:

Թեվֆիկ բեյ - Ո՛չ, էֆենդի՛, դա ոչ թե հայերին արմատախիլ անելու համար էր, այլ չարագործություններ կատարած ավազակներին պատժելու:

Նախագահ - Քանի՞ հոգի էին այդ ավազակները, ումի՞ց էին բաղկացած ավազակախմբերը, ինչքա՞ն եղավ ձեր կորուստը:

Թեվֆիկ բեյ - Այդ ավազակները տարբեր թվաքանակով էին, մոտավորապես 300-800 հոգի: Կազմված էին վիլայեթներում ապրող հայերից: Այդ ավազակները շարունակում են գոյություն ունենալ 1330թ. առայսօր: Մեր ուժերը բավականին մեծաքանակ էին, քանի որ մեզ զորք էր տրամադրվել մյուս կազաներից:

Նախագահ - Ձեր զեկուցագրում նշել էիք, թե չարագործությունների հեղինակ ավազակները նույնիսկ թնդանոթ են ունեցել: Դուք տեսե՞լ եք, թե ի՞նչ չափսի էր այն:

Թեվֆիկ բեյ - Էֆենդի՛, զեկուցագրում նշված «թնդանոթը» թերևս վրիպակ է: Պետք է գրվեր «գնդացիր»:

Թեվֆիկ բեյը մի քանի հարցերի ևս պատասխանեց, որից հետո Քեմալ և Ֆիազ բեյերը նույնպես դահլիճ բերվեցին: Ճշմարտությունը բացահայտելու նպատակով դատարան կանչվեց անգլոհպատակ գնդապետ Մեհմեդ բեյը՝ վկայություն տալու համար: Անձնական տվյալները ներկայացնելուց հետո նրան դիմեցին Յոզղատի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող հարցերով: Վերոհիշյալի կողմից տրված ցուցմունքների շնորհիվ պարզվեց, որ ինքն անձամբ տեսել է, թե ինչպես են կացիններով և դաշույններով հայերին կոտորում, սակայն այդ պահին, ըստ նրա վկայության, մեղադրյալները ներկա չեն եղել: Այդ պահին Քեմալ բեյը որոշ առարկություններ հայտնեց Մեհմեդ բեյի վկայությունների հետ կապված: Մասնավորապես հայտնեց, թե բացարձակապես սխալ է տեղահանությունը փետրվարին իրականացված լինելու մասին ցուցմունքը:

Այնուհետև, առաջին անգամ ի նպաստ մեղադրյալների ցուցմունք տալու նպատակով դատարան կանչվեց Սկյուտարի մութասարրիֆ Մեհմեդ Ալի բեյը, որը երդվելուց հետո հանդես եկավ մի շարք տեղեկություններով: Վերոհիշյալը հայտնեց, որ թեև ինքը տեղահանությունից մեկ ու կես տարի հետո է մեծարգո նախագահության հետ Յոզղատ գնացել, սակայն երբեք չի լսել, որ Ֆիյազ բեյը որևէ առնչություն ունեցած լիներ տեղահանությանը: Նա, ըստ վկայի ցուցմունքի, բարեխիղճ մի մարդ էր և չէր կարող նման բան անել, Ֆիյազ բեյը երբեք հարբեցող չի եղել և չի հանդիսացել «Միություն և առաջադիմություն» կուսակցության համախոհներից: Այս ցուցմունքներից հետո նախագահը նրան հարցեր տվեց Քեմալ բեյի, ինչպես նաև տեղահանության իրականացման հանգամանքների վերաբերյալ: Մեհմեդ Ալի բեյը հայտնեց, թե իրականում Քելլեր կոչվող վայրում գաղթականներից շատ քչերն են ոչնչացվել, սակայն դրան պաշտոնյաները և տեղի բնակչությունը չէին կարող մասնակցություն ունենալ, ծայրահեղ դեպքում դա կարող էր լինել կառավարության գաղտնի հրամանի հիման վրա:

Այս ցուցմունքները տալուց հետո Մեհմեդ Ալի բեյը դուրս եկավ: Դահլիճ մտավ Անդրանիկը, որը հանդես եկավ մեղադրյալների դեմ ուղղված որոշ ցուցմունքներով, որից հետո Քեմալ բեյը ոտքի կանգնելով ասաց. «Մեծարգո՛ փաշա, Ձեր խոնարհ ծառան բացատրություն պահանջելու շնորհիվ կապացուցի, որ մինչ այժմ վկայություն տալու նպատակով եկած հայերի խոսքերը ամբողջովին զրպարտություններ են և հորինված են»: Այս խոսքերից հետո Քեմալ բեյը մի քանի հարց տվեց Անդրանիկին, վերջինս տվեց հակընդդեմ պատասխաններ: Այնուհետև դատապաշտպան Սալահեդդին բեյը որոշ հարցեր տվեց հայերի քարավանների վերաբերյալ, որից հետո դատարան կանչվեց վկաներից Ազնիվը: Նրա վկայությունները ևս լրիվ ուղղված էին մեղադրյալների դեմ և առավել սուր բնույթ էին կրում: Վկաների ցուցմունքներից հետո մեղադրյալները աշխատեցին հերքել վկաների խոսքերը նախկինում արդեն իսկ արված որոշ հայտարարություններով և վկաների դեմ բացարկ հայտնեցին: Այնուհետև վկայության համար ներկայացավ Յոզղատի հաշվապահ Վեհբի բեյը: Վերջինիս հարցեր տվեցին նրա պաշտոնական պարտականությունների վերաբերյալ՝ ի նկատի ունենալով նրա՝ ժամանակին «Լքված գույքի» հանձնաժողովի անդամ լինելու հանգամանքը: Հաքի բեյը պատասխանեց՝ ներկայացնելով որոշ փաստաթղթեր: Դատապաշտպան Հյուսեին Համի բեյի պահանջի հիման վրա առերեսում կատարվեց նախապես հեռացված վկա Ազնիվի և Վեհբի բեյի միջև: Ժամանակի բացակայության պատճառով նիստն ավարտվեց: Շարունակվելու է շաբաթ օրը:

«Ալեմդար», 28 մարտի, 1919թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 4

«Ռազմական արտակարգ ատյանում»
«Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը»

Երեկ ժամը 13:30-ից ռազմական արտակարգ ատյանում Նազըմ փաշայի նախագահությամբ շարունակվեց Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը: Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց հետո ընթերցվեց հայցվորներից մեկի ընկերուհու՝ տիկին Սիրանուշի գրավոր ցուցմունքը: Հայցվորը, հայերի հանդեպ կատարված բռնությունների մասին խոսելով, տեղեկացնում էր, թե բռնագաղթից փրկվելու նպատակով ժամանակավորապես մահմեդականություն է ընդունել, «Միություն և առաջադիմություն» կուսակցության որոշ անդամներ (որոնց անունները չէր կարողանում մտաբերել) տղամարդկանց բռնագաղթեցնելուց հետո բռնությունների էին ենթարկել նրանց, կանանց տղամարդկանցից առանձնացրել էին, այդ օրվանից ինքը չէր տեսել ո՛չ ամուսնուն, ո՛չ էլ ազգականին: Հայցվորը նաև հայտնում էր, որ վերցրել էին իր մոտ գտնվող մետաղյա դրամները, և որ կատարված վայրենությունը կրկին վերականգնվում էր իր աչքի առաջ:

Մեղադրյալներից կայմակամ Թալաաթ բեյը, ոտքի ելնելով, հայտարարեց.

- Այդ կինը, որի վկայությունները քիչ առաջ ընթերցվեցին, հայտնում է, թե Տրապիզոնում այսպիսի բան է կատարվել, այնտեղ գտնվող կուսակցությունը այնպիսի որոշում է ընդունել և այլն: Մինչդեռ պետք է նշել, որ այդ գործը խիստ գաղտնի բնույթ էր կրում: Ինչպե՞ս կարող էր այդ կինը տեղյակ լինել նման կարևոր որոշումների մասին:

Թալաաթ բեյի վերոհիշյալ խոսքերից հետո նրան մի քանի հարց տվեցին: Մասնավորապես դատարանի կազմի անդամներից Մուսատաֆա փաշան նրան դիմեց հետևյալ կերպ. «Երկրում տեղահանությունն իրականացնելիս անհրաժեշտ էր, որ կատարեիք թե՛ Ձեր պաշտոնից և թե՛ մարդկային խղճից բխող պարտավորությունները»: Թալաաթ բեյը տվեց հետևյալ պատասխանը. «Սկզբունքայնորեն ես ժանդարմերիայի տեսուչ եմ: Քանի որ իմ պաշտոնական պարտականությունները բազմաբնույթ են, նման գործերով զբաղվելու ժամանակ չեմ կարողացել գտնել և, բացի այդ, դրանում ես պատասխանատու չեմ ու չեմ էլ կարող լինել»:

Այնուհետև ընթերցվեցին հետաքննիչ հանձնաժողովին ներկայացած մի հայցվոր կնոջ ցուցմունքները, համաձայն որոնց՝ Ջեմալ Ազմի բեյը, տղամարդկանց հավաքագրելով, նրանց նավակներով Քումքալե ուղարկելու հրահանգ էր տվել: Տեղափոխության ընթացքում բոլորին ոչնչացրել էին՝ մի մասին գնդակահարելով, մյուսներին՝ ջրախեղդ անելով: Կինը նշել էր նաև, որ Վարդան անունով ոմն իրեն մեկնաբանություններ էր տվել, հետագայում այս Վարդանին վիրավոր վիճակով հիվանդանոց էին տարել, որտեղ և թունավորել էին նրան: Գաղթականների երեխաների մի մասին ուղարկել էին Դեյիրմեն գետի ուղղությամբ, իսկ մյուս մասին Նիազի էֆենդու ղեկավարությամբ նավակներով հեռացնելուց հետո ծովն էին նետել: Իսկ ինքը կարողացել էր մահվանից խուսափել՝ նախ թուրքերի տանը, ապա՝ գերմանական բանկում թաքստոց գտնելու շնորհիվ:

Նախագահ (դիմում է մեղադրյալներին) - Որևէ ասելիք ունե՞ք:

Մուսատաֆա բեյ - Էֆենդի՛, ինձ դիմած գաղթականների մեծ մասին փրկել եմ և անթերի կերպով հանձնել ինձ վստահված իրերը:

Նախագահ - Որոշ նահանգներում գործն ուսումնասիրվել է, իսկ ինչու՞ Տրապիզոնում չեն խորացել գործի էության մեջ:

Մուստաֆա բեյ - Ես տեղյակ չեմ՝ մյուս նահանգներում գործն ուսումնասիրվել է, թե ոչ: Ըստ էության, դրա հետ կապված կառավարությանը քննադատելու (...)

Դատախազ - Մենք տեղեկություններ ունենք առ այն, որ Հատուկ կազմակերպության մեջ պահեստապետի տիպի ծառայություն է եղել:

Մուստաֆա բեյը, իր պաշտոնավարության վերաբերյալ երկար-բարակ տեղեկություններ տալուց հետո, խոսեց «Թյուրքիյենիք» թերթում իր դեմ եղած հրապարակումների մասին:

Դատախազ - Մթերքի և նման այլ բաների համար նահանգապետի նախա-

գահության տակ որևէ հանձնաժողով եղե՞լ է:

Մուստաֆա բեյ - Ո՛չ, էֆենդի՛, նման հանձնաժողով գոյություն չի ունեցել:

Այնժամ դատախազը հայտնեց, որ տրապիզոնցի հարյուրապետ Մեհմեդ Ալի բեյի կողմից մի տեղեկագիր է ստացվել, և այն ներկայացրեց նախագահին:

Նախագահ - Ընթերցված ցուցմունքների դեմ որևէ առարկություն ունե՞ք:

Նիազի բեյ - Հետևյալ կերպ կարող եմ հերքել երեխաներին ջրաղացը նետելու կամ էլ Դեյիրմեն գետն ուղարկելուց հետո ոչնչացնելու՝ ինձ ուղղված զրպարտությունները. այդ դեպքերի ընթացքում ես գտնվել եմ Ստամբուլում: Այդ ուղղությամբ հետաքննություն կատարելու դեպքում ճշմարտությունը կբացահայտվի:

Այնուհետև ընթերցվեց ռազմածովային նախարարությանը ներկայացված տեղեկագրին որպես պատասխան բերված տեղեկանքը, ըստ որի Նիազի էֆենդին 1330թ. մայիսի 25-ին տորպեդայով հասել է Ստամբուլ: Ապա Նիազի բեյը հանդես եկավ մի շարք մանրամասնություններով, որից հետո նախագահին դիմեց հետևյալ խոսքերով. «Մեծարգո՛ նախագահ, այդ բոլոր մեղադրանքները բացարձակապես չեն համապատասխանում ճշմարտությանը: Խնդրում եմ, որ այդ ուղղությամբ հետաքննություն կատարեք: Եթե այդ մեղադրանքներից գոնե մեկը հաստատվի, բոլորը ճշմարիտ կհամարեմ և ինքս կխնդրեմ իմ պատիժը»:

Այնուհետև ընթերցվեցին Նիազի էֆենդու կողմից հետաքննիչ հանձնաժողովին ներկայացված ցուցմունքները: Նիազի բեյը մեկ անգամ ևս համառորեն ընդգծեց տեղահանության ժամանակ իր՝ Ստամբուլում գտնվելու հանգամանքը:

Վկաներից դատարան հրավիրվեց Ավնի բեյը: Երդվելուց հետո նրան դիմեցին բազմազան հարցերով: Վերջինս հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. տեղահանությունը սկսվել է մի հայտարարության հիման վրա, այն ղեկավարվել է դոկտոր Թեհեդդին Շաքիրի բեյի կողմից, տեղահանության ընթացքում վալիի նախագահության տակ ոչ մի հանձնաժողով չի եղել, բոլոր գործողություններին իր ակտիվ մասնակցությունն է ցուցաբերել վալին, գազթականները ուղարկվել են հավաքական կերպով, որոշ խոսակցություններ են եղել նրանց՝ վտանգների ենթարկվելու մասին, այդ բոլորի ինստանցիան հանդիսացել է ոչ թե ոստիկանությունը, այլ նահանգապետությունը, ինքը «Կարմիր մահիկ» հիվանդանոցում որևէ պաշտոն չի զբաղեցրել, հիվանդանոցում թունավորման դեպքերի մասին ոչինչ չի լսել, հիվանդանոցում Ալի Սաիբ բեյը վարել է առողջապահության տեսչի պաշտոնը, իսկ հարկային տեսուչ Մեհմեդ Ալի բեյը ընդգրկված է եղել «Կարմիր մահիկ» հիվանդանոցի հանձնաժողովի կազմում և իր պաշտոնական պարտականությունները կատարել է արժանապատվորեն:

Նախագահ - Հայտնեցիք, որ տեղահանության ընթացքում որոշ չարագործություններ են գրանցվել: Ինչու՞ չմիջամտեցիք՝ կատարելով Ձեր մարդկային պարտքը:

Վկա - Չէի կարող միջամտել, էֆենդի՛:

Նախագահ - Գործակալ Մուստաֆա բեյն ընկերական կապեր ունեցե՞լ է նահանգապետի հետ:

Վկա - Ընդհանրապես նահանգապետը ամենուր լինում էր և բոլորի հետ հանդիպում:

Առողջապահության տեսուչ Սաիբ բեյ [մեղադրյալներից] - Ինձ հասած լուրերի համաձայն՝ վկան այստեղ տեղափոխվելիս որոշ փաստաթղթեր է բերել. դա համապատասխանու՞մ է իրականությանը: Եվ արդյոք տեղյա՞կ էր, որ այդ փաստաթղթերում եղել է առողջապահության տեսչի ստորագրությունը:

Վկա - Փաստաթղթերի բովանդակությանը չեմ ծանոթացել:

Ժամանակի բացակայության պատճառով առաջին նիստն ավարտվեց ժամը 12:30-ին: Որոշվեց երեկրորդ նիստն սկսել ժամը 14:00-ին:

«Ալեմդար», 4 ապրիլի, 1919թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 5

«Ռազմական արտակարգ ատյանում»
«Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարությունը»

Երեկ ռազմական արտակարգ ատյանում շարունակվեց Տրապիզոնի տեղահանության դատավարությունը: Նիստը սկսվեց ժամը 14:15-ին: Նախ հարցաքննվեց Կերասունի կայմական Արիֆ բեյը: Վերջինս հայտնեց, որ բացի Նիազի բեյից մնացած բոլոր մեղադրյալներին ճանաչում է, իր և նահանգապետի միջև ամեն բան պարզ է եղել, այդ իսկ պատճառով ինքը պաշտոնաթող է եղել: Թեև Տրապիզոնում եղած ժամանակ իրեն որոշ խոսակցություններ հասել են առ այն, թե հայերը, իրենց իրերը պահպանության հանձնելուց հետո հեռացել են, և որ որոշ ողբերգական դեպքեր են պատահել, սակայն այդ կապակցությամբ իրեն ճշգրիտ ոչինչ հայտնի չէ:

Ապա այդ օրը հրավիրված վկաներից նավահանգստի ղեկավար Ասըմ էֆենդին հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. «Վալին նավակներն այնպես էր տնօրինում, կարծես թե իրեն էին պատկանում, սահմանափակվում էր մեր գրասենյակի կողմից կատարվող ձևակերպումներով: Մենք բացարձակապես տեղյակ չէինք նավերի միջոցով կատարվող տեղահանության մասին, նավաստիներից ևս որևէ բան իմանալն անհնարին էր: Չէ՞ որ միայն իրպեսներին և իր գործին ձեռնտու մարդկանց էր ներգրավել: Ոչ ոք չէր կարողանում միջամտել: Վալիի բռնակալությունը բոլորին այն աստիճան էր վախեցրել, որ, մեծարգո՛ փաշա, մեր փոխարեն եթե Դուք էլ լինեիք, դարձյալ չէիք կարողանա միջամտել: Ես վալիին ոչինչ չէի կարող ասել՝ պաշտոնս կորցնելու վախի պատճառով: Ես թիկունք չունեցող մեկն եմ: Օրինակ՝ գործակալ Մուստաֆա էֆենդին ևս պատվարժան մի անձնավորություն է, սակայն վալիի ահից [հարկադրված] հսկում էր նավերը»:

Այնուհետև, մեղադրող կողմի պահանջի հիման վրա՝ վկային հարց տվեցին Ալի Սաիբ բեյի կողմից գիշերով երեխաներին մեծ կողովներով ուղարկելու մասին՝ համաձայն վկա Վերժինի՝ գիշերով կատարված տեղահանության առնչությամբ տված ցուցմունքի: Ի պատասխան՝ Ասըմ էֆենդին, իր խոսքը կրկնելով, հայտնեց, թե դա բացարձակ սուտ է, և որ ինքն այդ մասին տեղեկացել է տեղի թերթերից:

Վկա Ասըմ էֆենդուց հետո վկաներից դատարանի դահլիճ հրավիրվեց Տրապիզոնի նահանգային վարչության գրասենյակի ղեկավար Ֆուադ բեյը, որի ցուցմունքների համաձայն՝ ինքը տեղյակ չի եղել գաղտնի գործողությունների և փաստաթղթերի մասին, վիլայեթում երկու տեսակի գաղտնագիր է եղել, որից մեկին տիրապետում էր միայն վալին: Հավանական էր, որ տպարանում իր կողմից չնկատված որոշ բաներ տպվեին:

Ֆուադ բեյի՝ «Թանկարժեք իրերի հետախուզական հանձնաժողովի» կազմում ընդգրկված լինելու հանգամանքն ի նկատի ունենալով՝ նրան հարցրեցին վալիի կողմից գործակալ Մուստաֆա էֆենդուն տրված թանկարժեք զարդերով արկղիկի մասին: Վկան պատասխանեց, թե տեղյակ չէ:

Ապա որպես վկա հրավիրվեց եկամուտների տեսուչ Լյութֆի բեյը: Պարզվեց, որ Լյութֆի բեյը, «Լքված գույքի» հանձնաժողովում ընդգրկված լինելու շնորհիվ, չի աշխատել (...) բեյի հետ: Երկուսին էլ հարցաքննեցին թանկարժեք զարդերով արկղիկի կապակցությամբ: Լյութֆի բեյն ընդգծեց, թե հանձնման և ընդունման գործողությունները հանձնողների ներկայությամբ չեն կատարվել. դա անհրաժեշտ չեն համարել՝ այդ մարդկանց խղճին վստահելով:

Ալի Սաիբ բեյին տրված հարցին ի պատասխան՝ վերջինս պատասխանեց, որ 100000 լիրայանոց զարդեղեն չի եղել, ինչպես դա հավակնում էին Տրապիզոնում. այն հանձնաժողովին հանձնված զարդեղենը, որում ինքը ևս ընդգրկված է եղել, հազիվ 3-4000 լիրա լիներ, իսկ մնացածի մասին ինքը տեղեկություններ չունի:

Նախագահն էլ նշեց, թե այստեղ ուղարկված զարդեղենի ընդհանուր գինը 1000 լիրայից ցածր է եղել, ցուցակները ներկայացվել են Ֆուադ բեյին, քանակի չարաշահումը լիովին ապացուցվել է. այդ հանգամանքը նույնպես նրանց անփութության ցուցանիշներից է: Ապա վկային հիշեցվեց հաջորդ օրը ցուցակը տեսնելու նպատակով

գալու մասին:

Այնուհետև դուիլիճ բերվեց մյուս վկան՝ Ֆուադ բեյը: Վերջինիս հայտնեցին, որ զարդեղենը Տրապիզոնից Ստամբուլ է տեղափոխվել վիլայեթի դեֆդերդար Լյութֆի բեյի միջոցով: Ֆուադ բեյը հերքեց այդ լուրը և վկայեց, որ նահանգային վարչության գրասենյակի ղեկավարը սեփական կարծիք չունեցող մի անձնավորություն է հանդիսացել, իսկ վալիին ուղեկցել է մի օրաբանվոր:

Վկան նաև հայտնեց, որ Տրապիզոնում կատարված չարաշահումներին միայն ինքն է դեմ եղել. եթե ինքն էլ չլիներ, ամեն ինչ կողոպտվելու էր: Բացի այդ, ըստ վկայի ցուցմունքների, զարդեղենի քանակը պետք է որ ավելին լինել՝ ի նկատի ունենալով լքված գույքի մեծաքանակ լինելու հանգամանքը:

Ֆուադ բեյի ցուցմունքներից հետո ընթերցվեց տրապիզոնցի Մուրադի հետևյալ վկայությունը.

Կարճ բովանդակությունը. «Ականատես եմ եղել, թե ինչպես են Տրապիզոնից դուրս գալուց հետո նրանց բազմաքանակ իրերը, կտորներն ու աղամանդները վաճառվել: Այդ իրերն ընկել էին Նիազի էֆենդու և նրա ընկերների ձեռքը: Նիազի էֆենդին յուրացրեց իմ մոտորանավակը և այն վաճառեց Սինոպում: Դեֆթերդար բեյը ևս տեղյակ էր այդ մասին»:

Ապա դատախազի պահանջով հաղորդվեց, որ Մուրադը դատարան է ներկայացել ոչ թե որպես վկա, այլ՝ հայցվոր, և որ նիստի ավարտից հետո անդրադառնալու են նաև նրա հայցին:

Այնուհետև վկայությամբ հանդես եկավ երկրորդ քարավանով Դալ Թաբան բռնագաղթեցված տիկին Միստուհին, որից հետո վկաներից հարցաքննվեց տիկին Մանիկը:

Առաջինի՝ տեղահանության ժամանակ կատարված ողբերգական դեպքերի մանրամասն շարադրանքների և երկրորդի էլ՝ Ալի Սաիբ բեյի կողմից հիվանդանոցում կատարված չարագործություններին և մի կնոջ զննության ընթացքում ցուցաբերված բռնությանը վերաբերող ցուցմունքներին ի պատասխան՝ Ալի Սաիբ բեյը հայտարարեց. «Թեև մինչ այժմ անընդհատ ցուցմունքներ էին տալիս Նիազի և Ռիզա բեյերի դեմ, սակայն պարզվեց, որ նրանք տեղահանության ժամանակ ընդհանրապես բացակայել են քաղաքից. հիմա էլ սկսել են իմ նկատմամբ պահանջախնդրություն ունենալ»: Ապա Սաիբ բեյը ջանաց հերքել վկաների ցուցմունքները:

Այնուհետև դատարան հրավիրվեց հեռագրատան տեսուչ Ռյուշտի էֆենդին, որը հայտնեց, թե ինքը, տիկին Արսլանյանին որպես հոգեքույր ընդունելով, փրկել է նրան տարագրությունից, սակայն հաջողություն չի ունեցել երեխաներին ազատելու գործում:

Ռյուշտի էֆենդին նաև վկայեց, որ տեղահանությունը ղեկավարվել է վալիի և Նայիլ բեյի կողմից, որ ինքը մեղադրյալներից բոլորին էլ ճանաչում է, սակայն տեղեկություններ չունի՝ նրանք տեղահանության գործին մասնակցել են, թե ոչ. նրանց տեսել է միայն իրենց վերաբերող գործերով զբաղվելիս:

Նիստն ընդմիջվեց ժամը 17:30-ին. շարունակվելու է չորեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

«Ալեմդար», 27 ապրիլի, 1919թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 6

«Տրապիզոնի տեղահանության դատավարությունը»

Երեկ ժամը 13:45-ին ռազմական ատյանում Նազըմ փաշան շարունակեց Տրապիզոնի տեղահանության հետ կապված դեպքերի դատավարությունը: Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս տեղակալներից Սաքըբ բեյը:

Նախ դատարան կանչվեց և երդում տվեց վկաներից Վանի նախկին վալի Նազըմ բեյը, որը տրված հարցերին պատասխանելով, հայտնեց, որ տեղահանության

վերաբերյալ իր ունեցած տեղեկությունները հիմնականում հիմնված են խոսակցությունների վրա, Տրապիզոնի նախկին վալի Ջեմալ Ազմի բեյի և իր միջև եղած թշնամության պատճառով չի կարող նրա մասին վկայություններ տալ, մեղադրյալներից ճանաչում է Ռիզա և Մուստաֆա բեյերին, սակայն նրանց՝ այդ գործերով զբաղվելու մասին ոչինչ չի լսել: Լքված գույքի կապակցությամբ տեղեկացել է, որ հայերի գույքը տեղավորել են պահեստներում, դրանք խառնիխուռն վիճակում են եղել, իր եղած նախկին հանձնաժողովում ևս ցուցակները կարգավորված չեն եղել: Ծովում տեղի ունեցած անօրինականությունների մասին շատ բան է լսել, սակայն պատմել չի ցանկանում, քանի որ դրանք բոլորն էլ հիմնված են իրեն հասած խոսակցությունների վրա. ինքը ստույգ ոչինչ չգիտե:

Նազըմ բեյը ցուցմունքներ տվեց նաև [Տրապիզոնի] նախկին նահանգապետ Ջեմալ Ազմի բեյի կողմից կատարված չարագործությունների և Նուրի ու Մեհմեդ Ալի բեյերի կողմից մի հայ կնոջ և երեխաներին ծովը նետելու մասին:

Այս վկայությունները տալուց հետո Նազըմ բեյը դուրս եկավ:

Դատարանի դահլիճ հրավիրվեց Տրապիզոնի վերաքննիչ դատարանի նախագահ Հիլմի բեյը: Վկան հայտնեց, որ ինքն ընդգրկված է եղել տարաբնույթ հանձնաժողովների կազմում, «Վաճառքի հանձնաժողովի» գործողությունների կանոնակարգումը կատարվում էր գրասենյակում: Հիլմի բեյը նշեց, թե վալին լավ մտադրություններ չի ունեցել. դրանով էր պայմանավորված «Տեղահանության հանձնաժողովի» անկազմակերպ լինելու հանգամանքը:

Վերոհիշյալ ցուցմունքները տալուց հետո վկան նկարագրեց նաև հանձնաժողովում կատարված գործողությունները:

Այնժամ նախագահը հարցրեց. «Նման խճճված գործի մեջ ինչու՞ խառնվեցիք: Չէի՞ք կարող հրաժարական տալ»:

Հիլմի բեյը պատասխանեց, որ իր հրաժարականի դեպքում եթե այն ընդունվեր վալիի կողմից, բոլոր չարագործություններն ի հայտ կարող էին գալ: Վկան նաև նկարագրեց «Թանկարժեք իրերի» հանձնաժողովի գործողությունները և դրանց հանգամանքները, ապա հայտնեց, որ հայերից վերցված զարդեղենը նախ պահպանվել է թաղապետարանում, ապա այն լցրել են սնդուկների մեջ:

Հիլմի բեյը նշեց նաև, թե ինքը գանձարկղի մասին տեղեկություններ չունի, իսկ կուտակված զարդեղենի վերջնական արժեքը կարող էր 3-4000 լիրա կազմել: «Թանկարժեք իրերի» հանձնաժողովում կատարված չարաշահումներին անդրադառնալով՝ վկան հայտնեց, թե ինքը տեղյակ չի եղել:

Ապա ընթերցվեց այդ գործի կապակցությամբ հարցաքննված վկա Նազըմ բեյի գրավոր ցուցմունքը, որի առնչությամբ հարցեր տրվեցին Հիլմի բեյին: Հետո դահլիճ բերվեց վերոհիշյալ Նազըմ բեյը, որը հայտնեց, թե ծանոթ չի եղել Հիլմի բեյի հետ, իսկ վերջինս նշեց, թե մեկ անգամ տեսել է Նազըմին:

Նազըմ բեյը ցուցմունքներ տվեց նաև վալիի կողմից արված հայտարարության առնչությամբ և դուրս եկավ:

Կրկին վերսկսվեց Հիլմի բեյի առանձին հարցաքննությունը: Կատարված ողբերգական դեպքերին անդրադառնալով՝ նախագահը շեշտեց Տրապիզոնի դատախազի միջամտության անհրաժեշտությունը: Ի պատասխան՝ Հիլմի բեյը հայտարարեց. «Չմիջամտեց և չէր էլ կարող միջամտել»:

Այնուհետև դատարան կանչվեց առողջապահության տեսուչ Սադրեթթին բեյը: Նրա անձնական տվյալները հրապարակելուց հետո հարցաքննությունն սկսվեց: Սադրեթթին բեյը ցուցմունքներ տվեց առ այն, որ տեղահանության ժամանակ ինքը Տրապիզոնում չի եղել և ոչինչ չի լսել ողբերգական դեպքերի մասին, Ալի Սաիբ բեյի հետ ծանոթ եղել է, սակայն վերջինս, վկայի ցուցմունքների համաձայն, ոչ մի առնչություն չի ունեցել «Կարմիր մահիկ» հիվանդանոցի հետ: Վկայի վերոհիշյալ ցուցմունքներից հետո մեղադրյալներից Ալի Սաիբ բեյը, ոտքի կանգնելով, հայտարարեց, թե քանի որ վկաների ցուցմունքները ճշմարիտ են, ինքը ավելացնելու ոչինչ չունի, սակայն քանի որ վկաների ցուցմունքները ևս լիովին ապացուցված են, ապա տեսչի զեկույցը չի համապատասխանում ճշմարտությանը. թեև Սադրեթթին բեյը նախկինում ասել էր, թե իր կողմից Տրապիզոնում կատարվելիք հետաքննությունը լավ արդյունք չէր կարող տալ, սակայն, ամբաստանյալ Ալի Սաիբ բեյի կարծիքով, Սադրեթթին բեյի այդ խոս-

քերը բխում էին նրա ունեցած քաղաքական վարդապետությունից և այդ համոզմունքով էին ասվել:

Դրանից հետո Սադրեթթին բեյը դուրս եկավ:

Ներս բերվեց նավագնացության գործակալության նախկին պաշտոնյա Իթհամ էֆենդին, որը երդում տալուց հետո հանդես եկավ հետևյալ ցուցմունքներով. տեղահանության ժամանակ ինքը եղել է «Ռազմական փոխադրումների» հանձնաժողովի նախագահը, բանակի հրամանատար Ավնի փաշան այդ գործը հանձնարարել էր վալիին, սակայն վերջինս առաջադրանքը, ինչպես հարկն է, չէր կատարել և այն հանձնարարել էր իրեն: Քանի որ Մուստաֆա էֆենդին զինվոր էր, մթերք և ռազմամթերք էր առաքում «Հատուկ կազմակերպությանը», ինչ վերաբերվում է իրեն, ինքը ղեկավարել է ցամաքի միջոցով կատարվող առաքումը:

Վկան հայտնեց նաև, թե տեղահանության վերաբերյալ ինքը տեղեկություններ չունի, իսկ նավերը հեռացել են մաս-մաս:

Դատարանի կազմի կողմից հակասություն նկատվեց Իթհամ էֆենդու նախկին և այժմյան ցուցմունքների միջև: Պարզվեց, որ նա նախկինում հանդես է եկել Ալի Սաիբ բեյի դեմ ուղղված ցուցմունքով: Վկան նեղն ընկավ և շփոթվեց:

Այդ պահին ժամանակի բացակայության պատճառով նիստն ավարտվեց. շարունակվելու է երկուշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

«Ալեմդար», 1 մայիսի, 1919թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 7

«Ռազմական արտակարգ ատյանում»
«Տրապիզոնի տեղահանության դատավարությունը»

Երեկ ժամը 14:20-ից շարունակվեց Տրապիզոնի տեղահանությանը և կոտորածներին վերաբերող գործի ուսումնահրումը:

Դատախազի պաշտոնում հանդես էր գալիս Ֆերիդուն բեյը:

Դատարանի կազմի՝ դահլիճ մտնելուց անմիջապես հետո վկաներից հարցաքննության ենթարվեց իրավական տեսուչ Քենան բեյը: Վերջինս հայտնեց, որ տեղահանության ժամանակ ինքն այնտեղ չի եղել, սակայն հետագայում, նախարարությունից ստացված հրահանգի հիման վրա, զբաղվել է Լազիստանի, Չաթիկի և Տրապիզոնի տեղահանության գործի հետաքննությամբ: Երբ ինքը գտնվում էր Սամսոնում, ռուսների կողմից առաջին ռմբակոծությունն արդեն սկսվել էր: Քենան բեյը նշեց, որ տեղահանության իրականացման հանգամանքների մասին ինքը տեղեկացել է միայն լսելով, իսկ տեղահանությանն անձամբ ականատես է եղել Սամսոնում գտնվելու ժամանակ: Այդ տեղեկությունների համաձայն՝ Ջեմալ Ազմի բեյը բազմաթիվ չարագործությունների եղելիակ էր եղել. մասնավորապես՝ հայերին և հույներին նավերն էր լցրել և ոչնչացրել՝ ծովում խեղդելով: Ըստ վկայի ցուցմունքների՝ Ազմի բեյը հանդիսանում էր իր յուրաքանչյուր քմահաճույքն իրականացնող մի անձնավորություն. այսպես կայմակամ Բաքիրը սպանվել էր հետաքննության մարմնում [կոտորածների հրահանգները չկատարելու պատճառով]:

Վկան հայտնեց նաև, որ թեև զորակոչին հետևած չարագործությունների կապակցությամբ հետաքննություն կատարելը կամ տեղի դատախազին այդ մասին տեղեկացնելն իր պաշտոնական պարտականությունների շրջանակներից դուրս էին և վերաբերում էին բանակի հրամանատարներին, այնուամենայնիվ ինքը կատարված չարագործությունների մասին բազմիցս հայտնել է տեղի դատախազությանը:

Քենան բեյը նշեց, որ մեղադրյալներից ճանաչում է միայն Թալաաթ և Մուստաֆա էֆենդիներին:

Երկրորդ անգամ որպես վկա դատարան կանչվեց Ռյուշտի էֆենդին, որին նախագահը հարց տվեց տիկին Արսլանյանի դրամի վերաբերյալ և հիշեցրեց միայն

ճշմարտությունն ասելու պահանջի մասին: Ռյուշտի էֆենդին պատասխանեց, թե ինքը բացարձակապես տեղեկություններ չունի տիկին Արսլանյանի դրամի վերաբերյալ:

Նախագահ - Ասում եք, թե այդ դրամը Դուք եք վերցրել:

Ռյուշտի էֆենդի - Սամսունում նպարեղենի խանութ ունեմ: Կարող եք այնտեղի ցուցակները ստուգել: Ես նման բան երբևէ չեմ վերցրել և դրա վերաբերյալ տեղեկություններ չունեմ:

Նախագահ - Ինչու՞ եք համագործակցել Սաիբ բեյի հետ:

Ռյուշտի էֆենդի - Չեմ համագործակցել: Նա երեխաներին էր գննում:

Այդ պահին Ալի Սաիբ բեյը նույնպես որոշ բաներ ասեց այդ կապակցությամբ: Այնժամ Ռյուշտի էֆենդուն բազմաթիվ հարցեր տրվեցին դրա վերաբերյալ:

Խոսքին խառնվեց նախկինում վկայությամբ հանդես եկած և այդ պահին ունկնդիրների շարքում գտնվող Արդուլլահ էֆենդին: Վերջինս նշեց, թե որոշ հանգամանքներ ինքը լավ չի մտաբերում: Նախագահը վերոհիշյալին հրավիրեց ամբիոնի մոտ՝ ցուցմունքներ տալու:

Արդուլլահ էֆենդուն հարցեր տրվեցին տիկին Արսլանյանի դրամի վերաբերյալ, նաև թե ինչու են թաքցնելու պահին նրանից իրեր և դրամ պահանջել:

Վկան պատասխանեց, թե, եթե չի սխալվում, նման նախաձեռնությամբ ինքը հանդես է եկել տիկին Արսլանյանին փրկելու պահին:

Նիստն ավարտվեց ժամը 15:30-ին. այն շարունակվելու է երեքշաբթի օրը՝ ժամը 10:00-ին:

«Ալեմդար», 11 մայիսի, 1919թ.

Резюме

Судебные разбирательства депортации и резни армян в Йозгате и Трабзоне по данным газеты "Алемдар".

Мелине Анумян

Общеизвестно, что политика истребления армян иттихадистов была официально осуждена турками еще в 1919-1920 годах турецкими военными трибуналами. В 1919-1920 годах в городе Константинополе по обвинению в депортации и резне армян состоялись около 36 разных судебных разбирательств, которые нашли свое отражение в турецкой прессе того времени. На вышеупомянутые процессы одной из наиболее активно откликнувшихся газет являлась "Алемдар", которая издавалась в Константинополе в 1912-1921 годах. Газета "Алемдар" подробно представила также серию судебных разбирательств о резне армян в Йозгате и Трабзоне.

Как известно, несмотря на наличие многочисленных литературных источников на разных языках, подтверждающих геноцид армян, турецкая официальная историография продолжает отрицать сам факт геноцида. Согласно официальной гипотезе турецкой историографии, происшедшее в 1915-1916 годах, не было геноцидом, а всего лишь депортацией. Резни же стали результатом небрежности местных чиновников и злоупотребления ими своим служебным положением.

Опубликованные в газете "Алемдар" свидетельства и показания, прозвучавшие на судебных разбирательствах о резне армян в Йозгате и Трабзоне, снова подтверждают, что они были инструктированы и направлены правительством, а не являлись результатом злоупотреблений местных чиновников. Истинной же целью выселений было истребление всего армянского населения Западной Армении.

Summary

Indictments on the deportations and massacres of Armenians according to Alemdar Daily.

Meline Anumyan

It is a well-known fact that the policy of Union and Progress for destruction of Armenians was officially condemned by the Turkish military tribunals in 1919-1920. During 1919-1920 approximately 36 indictments on the deportation and massacres of Armenians were held in Constantinople, which were made public in the Turkish press. Alemdar Daily (1912-1921) of Constantinople was one of the main newspapers actively reflecting upon the court proceedings. Alemdar also shed light on the court proceedings on deportation and massacres of Yozghat and Trabzon.

As it is known, despite the fact that there is vast literature in different languages witnessing the Armenian genocide, the official Turkish historiography continues to deny the fact of the genocide. According to the official stance of the Turkish historiography what happened in 1915-16 was not a genocide but only a deportation, while the massacres were a result of the neglect and abuse of power by local officials during deportation.

The depositions brought up at the indictments of Yozghat and Trabzon, that were published in Alemdar Daily, are another evidence that the massacres of Armenians were not a result of neglect by local officials but a course of action directed by the government and the true goal of the massacres was the destruction of all Armenians.